13 ՓԵՏՐՎԱՐ 2021 ՇԱԲԱԹ 5(5645)

# Ազգ

Azg

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Ռուսաստանն ընդդեմ Եվրոպայի

Մեր աչքի առաջ վերջին ամիսներին աշխարհը փոխվում է: Ռուսաստանի արտգործնախարար **Սերգեյ Լավրովը** հայտարարել է, թե Ռուսաստանը պատրաստ է Բրյուսելի հետ հարաբերությունների խզմանը, եթե Եվրոպայում Ռուսաստանի դեմ այնպիսի նոր պատժամիջոցներ սահմանավեն, որոնք վտանգներ կստեղծեն ՌԴ տնտեսության զգայուն ոլորտների համար:«Եթե նկատենք, ինչպես ոչ մեկ անգամ է եղել, որ տնտեսության ինչ-որ ճյուղի վրա են կենտրոնանում պատժամիջոցները, մանավանդ մեր տնտեսության համար զգայուն ճյուղերը նկատի ունեմ, մենք պատրաստ կլինենք խզման: Մենք չենք ուզում մեկուսանալ միջազգային կյանքից, բայց նաեւ` պետք է պատրաստ լինենք դրան: Ուզում ես խաղաղություն, պատրաստվիր պատերազմի», ասել է Լավրովը: Ավելի վաղ ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչ **Մարիա Զախարովան** հայտարարել էր, թե ՌԴ-ն հայտարարություն կանի Եվրոպայում Ռուսաստանի դեմ պատժամիջոցների վերաբերյալ:

*ՕՐԵՐԻ ՀԵՏ*

## Իշխանությունների փառավո՞ր նվերը «ԱԶԳ»ի 30-ամյակին ընդառաջ...

«**Ազգ**»ի խմբագրությունը իր հիմնադրման 30-րդ տարեդարձին ընդառաջ, ինչպես սովորություն է ասել, լավ, շա՜տ լավ նվեր ստացավ Հայաստանի հոգատա՞ր իշխանություններից. երեկ խմբագրությունը ՀՀ Պետական գույքի կառավարման կոմիտեի կարգադրությամբ ստիպվեց դուրս գալ 1991 թ.ից ի վեր իր զբաղեցրած տարածքից, Հանրապետության (նախկին Ալավերդյան) փողոցի թիվ 47 շենքի 3-րդ հարկից, որը 2015 թ.ից ի վեր խմբագրությունը, ՀՀ կառավարության տնօրինմամբ համատեղության կարգով զբաղեցնում էր Ռամկավար Ազատական կուսակցության հետ:

Անշուշտ չենք կարող պնդել, որ Պետգույքի կոմիտեի կարգադրությունն ուղղված էր միայն խմբագրության դեմ. նույն կարգադրությամբ ստիպված եղան շենքը լքել նաեւ ՌԱԿ-ը եւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, որը նույնպես, վարձակալական հիմունքներով, վերոնշյալ 2015 թ.ից ի վեր զբաղեցնում էր նույն շենքի 1-ին եւ 2-րդ հարկերը: ԲՀԿ-ն բոլորովին անմխիթար վիճակում եւ 60-ական թվականներից երբեք չվերանորոգված շենքի իր հատվածը շուրջ 120 հազար դոլարով հիմնանորոգել ու կահավորել էր, իսկ «Ազգ»ը եւ ՌԱԿ-ը նույն նպատակով ծախսել էին շուրջ 50 հազար դոլար: Գումար` որը Երվանդ Ազատյանի, Հակոբ Վարդիվառյանի եւ Հակոբ Ավետիքյանի միջնորդությամբ նվիրաբերել էր Նյու Յորքից մեր պատվական հայրենակից, հայտնի բարերար Նազար Նազարյանը, որի անունով էլ կոչվում էր ամբողջ 3-րդ հարկը:

Ավելորդ չի լինի նաեւ ասել, որ բոլոր վարձակալների հետ Պետգույքի նախկին վարչությունը պայմանագիր էր կնքել, խոստովանենք` մատչելի գներով, 5 տարվա ժամկետով, որն ավարտվեց նախորդ տարվա աշնանը: Ժամկետի ավարտին` Պետգույքի կոմիտեն, այն ժամանակ դեռ Նարեկ Բաբայանի նախագահությամբ, մերժել էր վարձակալների դիմումը` ժամկետը երկարացնելու եւ, ի հարկին, վարձակալության գումարը ավելացնելու վերաբերյալ: Մերժումը եղել էր կտրուկ` հայտարարվելու է աճուրդային մրցույթ եւ բոլո՛ր ցանկացողները կարող են մասնակցել:

Ի վերջո հայտարարվեց աճուրդի օրը, ժամն ու ամսական վարձակալության մեկնարկային գինը` ողջ շենքի (843.83 քմ) համար` ամսական, ուշադրությո՛ւն, 4,448,000 դրամ, նվազագույն 5 տարի վարձակալելու պայմանով: Դրանով իսկ պարզ դարձավ բոլորին, որ շենքի հետագա բնակիչը կանխավ որոշված էր, եւ հենց այդ պատճառով, տնտեսական ներկա ճգնաժամային պայմաններում հասկապես, ոչ ոք մոտ չէր գա աճուրդին: Հասկանալի է` նույնպես շատ հզոր կազմակերպությունը միայն կարող էր տարեկան 53,376.000 դրամ վճարել վարձակալության համար:

Այսուհանդերձ, ինչպես ասվեց, աճուրդի օրն ու ժամը պաշտոնապես հայտարարված էր` 2020 դեկս. 24, ժամը 11:00: Հետաքրքրությունը մեծ էր` աճուրդը պիտի կայանա՞ր, ո՞վ էր լինելու երանելի վարձակալը, կարո՞ղ էր աճուրդը նվազուրդի վերածվել...

Որոշյալ օրը եւ որոշյալ ժամից 3 րոպե հետո «Ազգ»ի ներկայացուցիչը դիտորդի կարգավիճակով ներկայանում է Պետգույքի կոմիտեի շենքի համապատասխան տրահ: Տեսնում է 3 թե 4 հոգի նստած, որոնք տեսնելով անծանոթ երիտասարդին` այլայլվում են: Ապա, պատասխանելով երիտասարդի հարցմանը ասում, որ աճուրդն արդեն ավարտվել է, բայց մերժում են հայտնել «հաղթողի» անունը, ասելով, որ դա «գաղտնիք» է:

Այդ «գաղտնիքը» գաղտնի է մնում մինչեւ օրս, աճուրդի «կայացումից» շուրջ 1,5 ամիս հետո էլ: Ցարդ ոչ մի նշում խիստ թափանցի՜կ աշխատող Պետգույքի կոմիտեի պաշտոնական կայքէջում: «Օդում կախված լուրերի» համաձայն, շենքը վարձակալել է ինչ-որ ՊՈԱԿ, ինչ-որ ներդրումների հիմնադրամ, որում կամ որի միջոցով մեր երկրում ներդրում կատարողները երեւի գիտեն, թե իրենց ներդրումներից որքան մասհանում է կատարվելու վարձակալության համար...

Սակայն ամենամեծ «գաղտնիքը» դեռ առջեւում է. ո՛չ աճուրդից առաջ, ո՛չ էլ հետո եւ առայսօր, մեծահարուստ վարձակալը դեռեւս չի այցելել շենք, չի շրջել հարկերն ու սենյակները, այսինքն` չի ծանոթացել ու տնտղել այդքան մեծ գումարով վարձակալած իր իսկ տարածքին: Տարօրինակ չէ՞:

Ներկա պահին կարիք չկա լրագրողական հետաքննություն անցկացնելու, գաղտնիության քողը բարձրացնելու` պետական գույքի օտարման կասկածելի հատկանիշներ ունեցող այս գործողության վրայից: Կարեւորն այն է, որ Պետգույքի կոմիտեի նորանշանակ նախագահ, «թռչող կոկորդիլոսների» հայտնի մասնագետ Գարիկ Սարգսյանը տպավորիչ խստությամբ կրկնել էր իր նախորդի հրահանգը` ազատել տարածքը ու հեռանալ անհապաղ: Ու մեր խմբագրությունը հեռացավ:

Բարեբախտաբար կրկին մեզ օգնության հասավ մեր աննման` Թեքեյան մշակութային միությունը, որ Եզնիկ Կողբացի 20/3 հասցեում գտնվող իր շենքի հյուրընկալ դռները բացեց «Ազգ»ի, azg.am եւ azgonline-ի առջեւ, որտեղ ընդամենը երկու օրում տեղափոխվեց խմբագրությունը` իր 3000 հատոր կազմող գրադարանով, համակարգչային տեխնիկայով եւ, ամենակարեւորը` թերթի 30 տարվա հավաքածույով, լքելով իր հարազատ տունը:

Ներկա համարը լույս է տեսնում մեր նոր հասցեում, որտեղ առաջիկա երեքշաբթի օրը, փետրվարի 16-ին, «Ազգ»ի փոքրիկ անձնակազմը ներկա օրերի թելադրանքով` խիստ համեստ պայմաններում կնշի թերթի 30-ամյա տարեդարձը:

Մենք կշարունակենք լույս տեսնել ու հրապարակվել` թերթային թե ինտերնետային տարբերակներով:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Անորոշություն

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Ամեն օր ինչ-որ անհավատալի լուր փոթորկում է հանրությանը, միշտ զբաղեցնում այն աստիճան, որ մի պահ շեղվում ենք իրավիճակից դուրս գալու ելքերի որոնումից, մոռանում, որ Արցախի մեծ մասը կորցրել ենք փաստորեն, մնացած մի կտոր Արցախը շրջափակման մեջ է հայտնվել, այնտեղ գնացող եւ այնտեղից եկող ամեն շարժվող բան ռուսների եւ ադրբեջանցիների ակնդետ հսկողության տակ է: Արցախ այլեւս չեն կարող մեկնել արտերկրից` առանց Ադրբեջանի թույլտվության, այդ թվում` հազարավոր դոլարներով Արցախին օգնած Սփյուռքի մեր հայրենակիցները դա չեն կարող անել: Վաս երազում անգամ այս բոլորը հնարավոր չէր պատկերացնել: Դադիվանք գնացող ուխտավորների պարագայում ադրբեջանցիները նախօրոք ցուցակներ են ուզում, ցուցակների առկայությամբ անգամ ժամերով սպասեցնում են մարդկանց, պատահում է` վանք չեն թողնում, ռուսներն էլ լուռ դիտողի կարգավիճակում են, սեփական սրբավայրում անգամ աղոթել չենք կարող, մեր սրբավայրը, սուրբգրային ամենաթունդ մեղքի տակ ընկնելով, տվել ենք շներին: Օղակը սեղմվում է այն աստիճան, որ վաղը, երբ թուրք -ադրբեջանցի տանդեմի մտքով անցնի խեղդել Արցախը` մենք չենք կարողանա զենքուզորքով օգնության հասնել, չգիտեմ էլ ինչ անվտանգության երաշխավոր է Արցախի համար Հայաստանը:

Անհասկանալի վիճակ է Արցախի շուրջ նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի ուղղությամբ: Չնայած ռուսները իրենց համապատասխան պաշտոնյաների միջոցով թույլբերան ասում են, թե Մինսկի խումբը պետք է շարունակի աշխատանքը, բայց գործնականում այդ աշխատանքը չի երեւում: Զանազան ռուսական շրջանակներ, փորձագետներ խոսում են նոր ֆորմատներից` Մոսկվա-Երեւան-Բաքու, Մոսկվա-Բաքու-Անկարա: Արցախի հայերի խնդիրը, Արցախի կարգավիճակի հարցի լուծումը վերահասցեագրում են այդ նոր ձեւաչափերին` անգամ Հայաստանի հնարավոր մասնակցությունն այդ լուծման մեջ կասկածի տակ դնելով: Նույնիսկ չգիտենք էլ` այս պահին այդ Մինսկի խումբը, եթե աշխատի էլ, ի՞նչ խնդիրներ է լուծելու, քանի որ Արցախի կարգավիճակի հարցն այս պահին բարձրացնել պարզապես չի կարելի, երբ բազմաթիվ վիճելի հարցեր կան, անհասկանալի է բուն Արցախին պատկանող, սակայն չգիտես ինչու Ադրբեջանին հանձնված Հադրութի, Մարդակերտի գյուղերի խնդիրը: Դե ֆակտո Արցախի հետ կապված ամեն հարց ռուս-թուրք-ադրբեջանական ստորակայության ներքո է դիտարկվում, ռուս ու ադրբեջանցի` ձեռք-ձեռքի արդեն բուն Արցախում դրվող Նժդեհի արձանի ապամոնտաժելուց են խոսում` դա պարզապես խայտառակություն է: Եւ անգամ ՌԴ փոխնախագահ **Դմիտրի Մեդվեդեւը** վերջերս իր մի արտահայտությամբ ակնարկել էր Թուրքիայի մասնակցությամբ խնդիրները լուծելու իրողությունը:

Թեեւ տեղեկություններ կան, որ Հադրութում ադրբեջանցիները ավերում եւ այրում են իրենց հանձնված տները` կարծես վստահ չլինելով, որ դրանք մնալու են իրենց, բայց որոշակի ոչ մի բան ոչ ոք չգիտե: Էս անորոշությունը սպանում է: Ամեն օր ի հայտ եկող տարբեր լուրեր ու մանրամասներ անհանգստացնող են: Ռազմագերիների հարցը մեր կառավարությունն այդպես էլ ի զորու չեղավ փաթեթով լուծել, երբ ի սկզբանե դրված է եղել «բոլորը բոլորի դիմաց» փոխանակման սկզբունքը, հիմա էլ կարծես սակարկում են` գերիների դիմաց ինչ-որ բան պոկելու ուղղությամբ: Դե որ ասում ենք` բանակցողն այլ մարդ պետք է լինի, ու ոչ պարտվողը` այս պատճառով ենք նաեւ ասում:

⇨3

## Պատմության մեջ առաջին անգամ ԱԹՍ-ները վճռեցին պատերազմի ելքը

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Տարիներ առաջ Գերմանիայի քաղաքական շրջանակներում սկիզբ առած բանավեճը, որ վերաբերում է ԱԹՍ-ների` (անօդաչու թռչող սարքեր) `Բունդեսվեհրում ( Գերմանիայի Դաշնային Հանրապետության Զինված ուժեր) կիրառությանը, այս օրերին թեժանում է: Անցյալ չորեքշաբթի` փետրվարի 3-ին կոալիցիա կազմած ՔԴՄ-ՔՍՄ եւ ՍԴԿ-ն միակարծիք եղան, որ Ֆրանսիայի, Իտալիայի, Իսպանիայի հետ համատեղությամբ, եվրոպական ԱԹՍ- ների զարգացման ու ձեռք բերելու վերաբերյալ մարտ ամսին պայմանագիր պիտի ստորագրեն:

Գերմանական ռադիոն` «Դոյչլանդֆունկը», որ երբեւէ անտարբեր չի եղել Հայաստանում ծավալվող իրադարձությունների հանդեպ, փետրվարի 7-ի լրատվահոսքում ընդգծեց, թե «պատմության մեջ առաջին անգամ է, որ «Հայաստանի դեմ պատերազմում Ադրբեջանի հաղթանակի համար վճռորոշ եղան զինակիր (մարտական) ԱԹՍ-ները»: (Զինակիրն իմ թարգմանությունն է, ռազմական գործի մասնագետները 44 օրյա պատերազմի ժամանակ կիրառում էին հարվածային եւ հետախուզական եզրերը, եւ նկատսիս կարծիքով, դրանք երկուսն էլ զենք են, ուստի զինակիր բառեզրի կիրառումն արդարացված է): «Դոյչլանդֆունկի» վերոբերյալ դատողության հեղինակը երիտասարդ գիտնական **Ուլրիկե Ֆրանկեն** է, որ հատկապես այս օրերին ԱԹՍ-ների շուրջ չընդհատվող բանավեճը լուսաբանող գերմանական մեդիայի փնտրված զրուցակիցն է:

⇨10

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

# Մեր մականունները

Ամէն անգամ, երբ մեր պատմութեան էջերը կը թերթատեմ, ուշադրութիւնս կը գրաւեն անցեալի մեր տոհմիկ մականունները, կամ ազգանունները: Շատերու համար գուցէ անկարեւոր թուին, սակայն զիս մեծապէս կը հետաքրքրեն:

Կը մտածեմ, ուրկէ՞ եւ ինչպէ՞ս եկած են անոնք ու դարձած, ըսենք՝ թագաւորական, իշխանական տոհմ մը յատկանշող մականուն, կամ տոհմանուն: Բագրատունի, Ռշտունի, Ամատունի, Գնունի, Արծրունի... Շարքը կարելի է երկարել: Սիւնիները, պարզ է, որ Սիւնիքէն եկած են, Բագրատունիները իրենց տոհմի հիմնադիր Բագրատին առնչուած ըլլալու են, Գնունիները նոյնպէս՝ Գինէն: Թերեւս այս իմաստով միւսներն ալ ինչ-որ վայրի մը, կամ տոհմապետի մը առնչուած են:

Կը մտածեմ՝ ո՞ւր գացին այս անունները, ի՞նչ եղան, ինչո՞ւ չշարունակուեցան: Այսօր կան հատուկենտ մականուններ, ինչպէս՝ Բագրատունի, Ամատունի, Արծրունի, Ասրունի եւ այլն, թէեւ վստահ չեմ թէ այս մականունները կրողները իսկապէս վերոյիշեալ իշխանատուներուն ժառանգորդներն են, թէ՞ ոչ, սակայն, երբ լսեմ անոնց մականունները, տարբեր զգացում մը կ՚արթննայ մէջս:

Հիմա բոլորը պիտի ըսեն, թէ մեր ներկայ մականուններուն ջախջախիչ մեծամասնութիւնը թուրքին գործն է, եւ ճիշդ է: Երբ կը խօսինք Ցեղասպանութեան մասին, երբ կը խօսինք մշակութային եղեռնին մասին, կը մոռնանք յիշելու մեր մականուններուն ալ «եղեռնը»...

Սովորական է լսել մականուններ, որոնք անձին արհեստին վերաբերած են, ինչպէս: Գույումճեան (ոսկերիչ), Դեմիրճեան (երկաթագործ), Նաճարեան (ատաղձագործ), Տեկիրմենճեան (ջաղացպան)... Կամ՝ մարմնական թերութեամբ մը յատկանշուած, ինչպէս՝ Թոփալեան (կաղ), Չոլաքեան (ձեռնախեղ), Շիշմանեան (գէր)... Նաեւ ծննդավայրին առնչուող, ինչպէս՝ (Մարաշլեան, Այնթապլեան, Քիլիսլեան եւ այլն):

Այս բոլորը հասկնալի են, նաեւ ընդունելի, քանի որ շատեր իրենց բուն մականունը մոռցած ըլլալով, թրքական անուանացանկերուն մէջ ստիպուած էին թրքերէնով ածականներ ու անուններ յղանալ ու դրոշմել, եւ այդ ածականները ոչ միայն տոմարներուն մէջ կը մնային, այլ՝ կը դաջուէին իւրաքանչիւրին ճակատին ալ:

Դժբախտութիւն մըն է, որուն ցաւը ուշ զգացին անոնց տէրերը: Այնպիսի մականուններ, որոնց ի լուր, կամ ի տես, մարդիկ կրնան խնդալ, սակայն ես՝ կը տխրիմ::

Հիմա, քանի մը մականուն (ազգանուն) պիտի յիշեմ, եւ շատ պիտի խնդրեմ այդ մականունները կրողներէն, որ ներողամիտ գտնուին, քանի որ մտքիս ծայրէն իսկ չ՚անցնիր վիրաւորել զիրենք:

Եըլանկէօզեան (օձի աչք ունեցող), Թախտապուրունեան (փայտէ քիթ ունեցող), Սողանյիմէզեան (սոխ չուտող), Չաթալպաշեան (երկճիւղ գլուխով), Պոշկեզենեան (պարապ-սարապ պտտող)... Ասոնք ալ թուրքին գործը չեն յուսամ, սակայն մեր մէջ շատ ընդհանրացած է մարդոց պիտակաւոր անուններ փակցնելը: Մարդոց անուն կը փակցնենք ու վերջն ալ «զոհերը» այդ ածականներով, որպէս մականուն ընդունած, կը մտնեն տոմարներու մէջ: Թուրք պաշտօնեան պիտի հարցնէ ձեր մականունը ի՞նչ է, անշուշտ անուանակոչեալ մարդուն զաւակները, կամ թոռները մոռցած ըլլալով պիտի ըսեն թրքերէն **«Պիզի Եըլանկէօզ կիւ տեյլար»**, (Մեզ Եըլանկէօզենք կ՚ըսեն), ու պաշտօնեան ալ պիտի արձանագրէ ճիշդ այդպէս:

Այսօրինակ մականուններուն տէրերը յանցաւոր չեն, իրենք այդ անունները ժառանգեր են իրենց մեծերէն, սակայն, ըստ իս յանցաւոր են, որ ցարդ փոխել չեն տուած: Ի՞նչ իմաստ ունի պահել «Պոշկեզենեան» նուաստացուցիչ մականունը, որպէս «թանկագին» ժառանգ, երբ ուրիշներ զայն «Զէնեան» ի դարձուցած են, շատ կարճ ու յարմար, նոյնիսկ՝ իմաստուն:

Ի՞նչ իմաստ ունի պահել «Տիւզտապանեան» մականունը, որ նախահօր մը ոտքին տափակ ներբանին համար տրուած մակդիր մըն է: Իսկ ամենատարօրինակը, որ ծիծաղելի ըլլալու կողքին շատ ցաւալի է ու շատ վարկաբեկիչ՝ «Ճեպիստելիքեան» մականունն է: Աստուած հոգին լուսաւորէ խեղճ մեծ հօր մը, որ աղքատ է եղած հաւանաբար, որ ճանչցուած է որպէս «գրպանը ծակ» մարդ, որուն թոռները այսօր հաւանաբար շատ պաշտօնական ու հարուստ մարդիկ են:

Պատկերացուցէք սփիւռքի մէջ ապրող հայու մը կացութիւնը, որ օտար պաշտօնէային պիտի թելադրէ իր մականունը՝ Թախ-թա-պու-րուն-եան, կամ՝ Ճե-պի-ստե-լիք-եան.. Այդ պաշտօնեան հազար կտոր պիտի ըլլայ գրելու համար թելադրուածը, մտքէն ինչ հայհոյանքներ տեղացնելով թելադրողի հասցէին. (ականջը խօսի Վահէ Պէրպէրեանին):

Հանեցէ՛ք, նետեցէք ձեր վրայէն թրքական այդ տգեղ պիտակները: Հերիք ինչքան կրեցինք մեր նախնիներուն ծանր բեռը: Անոնք ստիպուած էին, մենք ստիպուած չե՛նք:

# Ուրիշի դժոխքի վրա իրենց դրախտն ստեղծողները

ՆԱԻՐ ՅԱՆ



Արտահերթ ընտրությունների հանրային պահանջ չկա, խորհրդարանական ու արտախորհրդարանական ուժերն էլ չհակառակվեցին իմքայլականների ու նրանց առաջնորդի հայտարարությանը: Ասել է թե արտահերթ ընտրությունների էջը պատռեցինք-գցեցինք մի կողմ ու շարունակում ենք ապրել Փաշինյանի նախանշած զրոյական կետից: Իշխանությունը գոհ է, ընդդիմությունը՝ նույնպես, կարծես թե ամեն օր գլխներիս թափվող դժոխքին վարժվում ենք, քաղաքական վերնախավը կա՛մ խղճում-կարեկցում է պատառ-պատառ եղած երկրին, կա՛մ շրթունքները լպստելով սպասում, թե երբ է կտակը բացվելու, որ իմանան՝ ում, ինչ ժառանգություն է բաժին հասել:

Ամիսներ առաջ նույն ընդդիմությունը բողոքի ցույցերի, ելույթների ժամանակ ու ֆեյսբուքյան գրառումներում բացահայտ ու տողատակերով հաթաթա էր տալիս՝ պետք է ժամ առաջ ազատվել դավաճանից ու նրա թիմից, նոր «Նեմեսիս» է լինելու, գտնվելու է մի տղամարդ, որ վերջ դնի ազգային խայտառակությանը՝ պետական դավաճանից վրեժ լուծի եւ այլն, եւ այլն: Գեղարվեստական արտահայտչամիջոցներով հագեցած վերամբարձ խոսքերի ու արդարության պահանջի, դավաճանին պատժելու կոչերի ու հորդորների պակաս այս ամիսների ընթացքում չենք զգացել: Անհնազանդության ակցիաների ավանդական վերջաբանը բերման ենթարկվելն ու մի քանի ժամից ազատ արձակվելն էր. ու այդպես մի քանի ամիս, մինչեւ որ եկավ սպասված հանդուրժողականության ու անպտուղ պայքարից հրաժարվելու հոգեբանական հանգրվանի ժամանակը, այսինքն՝ այսօրը: Քաղտեխնոլոգիայի տեսանկյունից ոչ մի արտառոց բան չի կատարվել: Ամեն ինչ ընթացել ու ընթանում է ՝ ըստ ծրագրվածի, ըստ կոնսենսուսի: Եվ դրա հերթական ապացույցն արտահերթ ընտրություններից հրաժարվելու՝ ըստ սցենարի՝ լուռ համաձայնությունն էր: Անգամ այդտեղ բոլորը՝ դիմություն, թե ընդդիմություն, վաս խաղացին, գոնե ձեւական ջղաձգումներ ու ճղճղոցներ չեղան:

Չենք տեսնում, բայց զգում ենք. բոլորին խաղաթղթերը նախօրոք են բաժանված, խաղաթղթերի վրա՝ դերերի անուններ, իսկ սեղանին՝ սցենարական պլանն է, իշխանությունների սիրելի բառապաշար ու օրակարգ ներմուծված ճանապարհային քարտեզը: Սցենարական պլանը մշակված է ըստ գերագույն ծրագրի՝ ամեն գնով երկարաձգել Նիկոլ Փաշինյանի իշխանությունը: Գործող անձանցից յուրաքանչյուրին բաշխված է դեր՝ ըստ դերասանական շնորհի ու ծառայություններ մատուցելու ընդունակությունների:

Մեկը հացադուլ է հանձն առել, մյուսը՝ վրանների տակ գիշերակացով «պայքարը», երրորդը՝ Փաշինյանին քրեական պատասխանատվության ենթարկելու փաստահավաք գործունեությունը, չորրորդն ապահովում է Փաշինյանի քաղաքական երկարակեցությունը՝ ռեֆլիեմային ազդանշաններով: Բոլորն անխտիր իրենց դերակատարումն ունեն. կան գլխավոր ու երկրորդական դերակատարներ: Դերերի հերթականությունը սահմանող կոճակը Կրեմլում է: Հենց գալիս է գլխավոր դերակատարների պրոֆեսիոնալ խաղի հերթը, հանրության բնազդները սրվում են, իսկ կառավարությունում սպասում են. հենց որ հանրությունը դրամատիզմով հագեցած պրոֆեսիոնալ խաղը մարսելու նշաններ ցույց տա, անմիջապես ետնաբեմից արձագանքեն՝ հը՞, հո չե՞ք ուզում, որ նախկին կյանքը վերադառնա:

Սգո պսակները վիզը գցած ժողովուրդն է՛լ ուժ չունի, Եռաբլուրից անտիկ ողբերգությունների, դանթեական հառաչներ են հնչում, ժամանակակից քաղաքական տրագիկոմեդիաներն էժանագին աթոռակռիվ տվողների համար են արժեք ներկայացնում, բայց ոչ մի ամբողջ սերունդ մատաղ արած ժողովրդի: Դրա համար էլ երբ իմքայլականները ժողովրդի անունից խոսեցին ու ասացին, թե լայն զանգվածների շրջանում ընտրությունների պահանջ չկա, հանրությունը չընդդիմացավ, չբողոքեց՝ էդ ո՞ւմ անունից եք խոսում ախր, դուք մեզ հարցրե՞լ եք՝ ընտրություններ ուզո՞ւմ ենք, թե՞ ոչ: Չընդդիմացան, որովհետեւ ժողովուրդն ընտրազանգվածից վերածվել է արնաքամ, ծվեն-ծվեն եղած, որդի կորցրած հավաքական մոր կերպարի, որը չի վերագտնում ապրելու իմաստը: Որդու հետ նրա պորտալարը կտրվել է, կտրվել է բիրտ, դաժան կտրոցով, պորտալարի հետ կտրվել են նաեւ կյանքին կապող թելերն ու իմաստավորված հանգույցները:

Գրողի ծոցը գնացեք բոլորդ՝ անխտիր: Պորտալարը կտրել եք, ձեր սեւ գործն արել-պրծել եք, գոնե հիմա ծորացող արյունը մի՛ ծաղրեք, մի՛ պղծեք հազարավոր կորսված որդիների հիշատակը: Դուք մեծ-մեծ խոսում ու նկարահանվում եք, ձեր թանկ շորուկոշիկը ցույց տալիս, դրամատիկ ժեստերով «իմաստավորված» ձեր դեմքերը տեղադրում հեռուստաէկրանների շրջանակների մեջ ու անկոչ հյուրի պես մտնում նահատակված տղաների սգավոր տները:

Իսկ նրանք մի կարգին լուսանկար էլ չունեն, տեսանկարահանված մի կարգին կադր էլ չունեն. նրանք անգամ «Վերջին զանգ» չունեցան, անգամ չհասցրին սիրած աղջիկա ձեռք բռնել, մի կարգին շորուկոշիկ մաշել, ուսանողական նստարանին նստել, ուսանողական տոմս էլ չունեցան:

Դուք թույն եք լցնում նրանց մայրերի արցունքի ծովի մեջ, անարգում եք Եռաբլուրը:

Դուք ձեր կյանքում ամեն ինչ հասցրել եք ունենալ, բազմապատկել ու հազարապատկել, հասցրել եք զգալ կյանքի հաճույքները, կյանքի փոփոխականության վրա հիմնված ձեր բարգավաճումն ու ճկունության վարպետությունը: Դուք հասցրել եք զգալ ձեր անգերազանցելիությունը:

Նրանք միայն ընդհատված կյանքեր չեն, նրանք չասված սիրո խոսքեր են, չկայացած հարսանիքներ, չկարդացած գրքեր, չստացած դիպլոմներ, չկազմված ընտանիքներ, չծնված երեխաներ: Նրանք չապրած, ոչնչացված, անարգված, պղծված կյանքեր են: Ու դո՛ւք եք մեղավոր, բոլորդ՝ անխտիր: Դուք ամենավերջին հանցագործն ու եղկելի երեխայասպանն եք: Դուք ուրիշի դժոխքի վրա ձեր դրախտն եք ստեղծում հենց հիմա:

# Սահմանապահ Այգեձոր



**Այգեձորը գտնվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում՝ հայ-ադրբեջանական սահմանի մոտ՝ մարզկենտրոնից 75 կմ հարավ-արեւելք, Ախնջա գետի ափին: Խոսել սահմանամերձ գյուղի բնակիչների մասին, բնութագրել նրանց առօրյան՝ դժվարությամբ է ստացվում. յուրաքանչյուր օր վախով քնող, սակայն երբեւէ հույսը չկորցրած մարդիկ են ապրում այստեղ՝ որոնց երազանքը միայն աշխարհում խաղաղության հաստատումն է: Չնայած այն հանգամանքին, որ յուրաքանչյուր օր գյուղացիները ստիպված են կրակոցներ լսել, ապրել համատարած վախի մթնոլորտում, «պայքարել» իրենց օրվա գոյության համար՝ մենք կարողացել ենք պահպանել գյուղացուն հատուկ մաքրությունը, միամտությունն ու մարդասիրությունը: Գյուղում խնդիրները շատ չեն՝ կան աշխատատեղերի խնդիրներ, սակայն հողի ուժը շարունակում է պահել մեզ մեր հայրենի գյուղում:**

**Համատարած վախի մթնոլորտ է, թշնամին մի քանի հարյուր մետրի վրա է ու մտքում հյուսում է հերթական դավադրությունը: «Ամեն երեկո քնելուց առաջ ասում ենք՝ տեսնես հաջորդ առավոտ կարթնանք, թե՞ չէ: Դա ենք զգում: Ու որ առավոտն արթնանում ենք՝ անկախ մեզնից ասում ենք՝ փառք Աստծո, դեռ սաղ ենք»: «Աշխատանք չկա, հող ենք մշակում բահերով: Մտնում ենք՝ այգին, որ մի քիչ գործ անենք, տեսնում ենք կրակում են՝ փախչում ենք: Արդեն էլ փորներումս սիրտ չի մնացել: Ամեն րոպե կրակոց. դադարներով, անսպասելի»: Այգեձորցիները հանգիստ չունեն անգամ երազում՝ «ամեն րոպե երազում էլ տեսնում ենք՝ որ եկան, կրակեցին»:**

**Որպես իսկական հայ տղամարդ՝ այգեձորցին վստահ է. «Գյուղը մենք կպահենք՝ ինչ էլ որ լինի, մենք կանգնած ենք՝ մեծից փոքր»: Ընդհանուր լարված մթնոլորտն իր ազդեցությունը չէր կարող չթողնել երեխաների հոգեբանության վրա: Մեր պաշտպանական դիրքերը հայ զինվորները լավ են պաշտպանում, թերացում չկա: Մենք պիտի շենացնենք մեր գյուղը, որ հարեւան ադրբեջանցիները տեսնեն, որ մեզ համար կրակոցները կարեւոր չեն:**

ՆՈՐԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

# Անորոշություն

➩1 Մեկ օր առաջ. օրինակ, Հայաստանի ԱԱԾ-ը հաղորդագրություն տարածեց, որ Սյունիքի սահմանային տարածք լրագրողները կարող են մեկնել եւ լուսաբանել միայն ԱԱԾ հատուկ թույլտվությամբ: Դրա համար նախապես պետք է դիմել ԱԱԾ, դա պայմանավորված է օպերատիվ իրավիճակով եւ անվտանգության նկատառումներով իբր: Հասանք տեղ՝ մեր սեփական երկրում տեղաշարժվելու համար պետք է ԱԱԾ-ից թույլտվություն խնդրենք, սրան ի՞նչ անուն պետք է տալ: Որ ի՞նչ լինի՝ Սյունիքում կատարվողի մասին բան չիմանա՞նք: Կամ ի՞նչ գաղտնի պայմանավորվածություններ կան թաքցնելու սեփական ժողովրդից, որ լրագրողները հատուկ դիմեն ԱԱԾ, ստանան կամ չստանան թույլտվություն, ի՞նչ է, արտերկի՞ր են այցելում: Սա խիստ անհանգստացնող ու կասկածելի է, մանավանդ ԱԱԾ հաղորդագրությունը նախորդել էր նախկին վարչապետ Հրայր Բագրատյանի բացահայտմանը, երբ Գորիս -Կապան ճանապարհին ռուս սահմանապահները նրան ցույց էին տվել մինչեւ այժմ անհայտ եւ Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ կնքված մի հուշագիր, ըստ որի ճանապարհի այդ հատվածի երթեւեկության վերահսկողությունը կարգավորվում է նաեւ ադրբեջանական կողմի մասնակցությամբ: Որ ընդդիմությունն անընդհատ վարչապետին հարցնում էր, թե էլ ի՞նչ գաղտնի հավելվածներ կան եռակողմ հայտարարությանը կից, պատասխան չէր տրվում, բա էլ ո՞նց չկասկածես ոչ միայն այս հուշագրի, այլեւ ավելի վատթար այլ հուշագրերի գոյությանը, մանավանդ ԱԱԾ հաղորդագրությունը կարծես այդ վատթարի օգտին է խոսում: Եւ ԱԺ-կառավարություն վերջին հարցուպատասխանի ժամանակ էլ այս հարցը կրկին մնաց անորոշ պատասխանով: Հարցն ուղղված էր վարչապետին, ու որին, չգիտես ինչու, պատասխանեց փոխվարչապետ **Տիգրան Ավինյանը**, այդպես էլ չփարատելով այդ կասկածները՝ Ավինյանն ուղղակի այդպիսի հուշագրերից տեղեկություն չուներ, ու սա չի նշանակում, որ այդպիսի նոր, գաղտնի հուշագրեր գոյություն չունեն: Ի դեպ՝ միայն մեր տպավորությունը չէ, որ Ավինյանը փաստորեն չի հերքել այդպիսի հուշագրի գոյությունը, նույն ընկալումը կար նաեւ երեկվա ԱԺ ճեպազրույցներին մասնակցող ընդդիմադիր պատգամավորների մոտ, որոնք պահանջում էին պաշտոնապես անդրադարձ կատարել համացանցում ակտիվորեն տարածվող, առանց ստորագրության, մեր բնակավայրերն ադրբեջանական՝ մեզ համար վիրավորական տարբերակներով նշված այս թղթին, հերքել կամ հաստատել: Ավելին, պատգամավորները համարում էին, որ հուշագիր անվանված այդ թղթի որոշ դրույթներ արդեն իրականացվել են, իսկ **Շաքե Իսայանը** ԲՀԿ-ից մտահոգված առ այն, որ ձյունը հալվելուն պես նոր տարածքներ են անցնելու ադրբեջանական վերահսկողության տակ՝ GPS-ով սահմանազատման արդյունքում: Ըստ նրա՝ կոնկրետ Շղուկ լեռան հատվածում կա խնդիր, տեղի բնակիչներն են պատմել, թե լուրեր կան՝ GPS-ը արձանագրել է, որ դա Ադրբեջանի տարածք է: Նույն կարգի լուրեր Չիլի բնակիչներն են փոխանցել: Ի՞նչ է, կարող է մի օր էլ արթնանանք ու պարզվի, ինչպես ճեպազրույցի ժամանակ նկատեցին, որ Հայաստանը ոչ թե մոտ 30 հազ քառ. կմ է, այլ , ասենք, 24 հազար: Ու այս բոլորը չէր լինի, ըստ ճեպազրույցին հնչած տեսակետի (Մ. Մելքումյան), եթե նոյեմբերի 9-ին պարտության թուղթը ստորագրողը նոյեմբերի 10-ին հրաժարական տված լիներ:

Ոչ մի քաղաքական ուժի չհարելով՝ մենք էլ ենք ասում՝ վնասի կեսից հետ դառնալը խելամիտ կլիներ, եթե այլ բանակցող ունենայինք, վերջինս Ավինյանի նման կչքմեղանար, թե ինքը տեղյակ չէ այդպիսի պայմանավորվածություններից, հետեւաբար չի կարող կատարել դրանք:

Իսկ թե ինչո՞ւ իրավիճակից որպես առաջարկվող ելք՝ արտահերթ ընտրությունները վարչապետը չեղյալ հայտարարեց, թե՝ այդպիսի պահանջ չկա հանրության մեջ, լրիվին անհասկանալի մնաց, քանի որ հանրության մեջ նախ եւ առաջ պահանջ չկա երկրի , պետության շահերը հետապնդել չկարողացող վարչապետի: Եթե երկրի ղեկավարը չի կարողանում փաստարկված մերժել ռուս-թուրքական զանազան քմահաճույքները եռակողմ հայտարարությունից դուրս (իբր եռակողմի նվաստացուցիչ կետերը մարսեցինք՝ հիմա էլ հավելյալ խնդիրներ են պարտադրվում), ապա գոնե մինչեւ այժմ պատճառված վնասը չմեծացնելու եւ Արցախյան պատերազմի ելքով Հայաստանի ինքնիշխանությանը սպառնացող վտանգը չեզոքացնելու համար պատերազմի եւ խաղաղության հարցերով հատուկ բանագնացի հարցի լուծումն, ուրեմն, անխուսափելի պիտի լիներ եւ անհապաղ: Ազգային ժողովում արտգործնախարար **Արա Այվազյանի** տարօրինակ պատասխանը վկա, թե այլեւս Թուրքիան որեւէ պատճառ չունի սահմանը փակ պահելու Հայաստանի ուղղությամբ, ադրբեջանական ագրեսիայի արդյունքում պատճառը վերացել է (նկատի ունի տարածքների հանձնումը): Նույն պահին մտքներովս անցավ, որ եթե այսպես գնա՝ Ցեղասպանության ճանաչման հետապնդումից էլ մերոնք կսկսեն հրաժարվել, քանի որ հաստատում չստացած լուրերի համաձայն՝ Թուրքիան հաղորդուղիների ապաշրջափակման դիմաց հենց այս պահանջն է ներկայացնում Հայաստանին: Միայն մեր խմբագրությունը չէ այդ մասին մտածել, դատելով տարբեր խիստ արձագանքներից, օրինակ ՀՅԴ Հայ դատի կենտրոնական խորհուրդը մի խիստ հայտարարություն է տարածել՝ ծավալուն անդրադարձով ցույց տալով ԱԳ նախարարի այդ հայտարարության վտանգները:

### Արտահերթ ընտրությունները միգուցե կլվանային նաեւ իշխանության դեմքը

Ընդդիմությունից միայն ՀՀԿ-ն էր, որ չէր արտահայտվել վերջնականորեն՝ կմասնակցե՞ր ընտրություններին, թե՞ ոչ, եթե իշխանությունը արտահերթ ընտրություններ նշանակեր: Հաջորդեց իր թիմի հետ վարչապետի հանդիպումից հետո հայտարարություն, թե այսպես ու այսպես՝ այս պահին հանրության մեջ պահանջ չկա արտահերթ ընտրության, այդպիսով նաեւ նոր ասեկոսեներ ծնելով **Սերժ Սարգսյանի** շուրջ: Այ քեզ բան, ինչո՞վ են չափել պահանջը, զոհվածների հարյուրհազարավոր հարազատներին հարցրե՞լ են, Սյունիքի սահմանամերձ բնակչության կարծիքն իմացե՞լ են, որոնք ամեն օր նոր պրոբլեմների են հանդիպում իրենց առօրյա կյանքում: Ընդհանրապես՝ իրենց ոչ կոմպետենտությամբ ու անպատասխանատվությամբ (**Էդիկ Բաղդասարյանի** հետ լրիվին համաձայն եմ այս առումով) մեր պարտության կրողները որքա՞ն են ուզում դեռ այս իրավիճակը չպարզաջրել՝ գոնե արտահերթ ընտրություններով վերբեռնելով հայկական կյանքը, որով նաեւ իրենցից մի մասի դեմքը մասամբ կլվացվի երկիրը պարտության տանելու խորը դաշից, եթե, այնուամենայնիվ, այդ մի մասը, նորացված թիմով, վստահության քվե ստանա՝ այլ քաղաքական միավորների հետ մեկտեղ: Խորհրդարանում վարչապետ **Փաշինյանի** անհավես, անտրամադիր պատասխաններից դժվար է գլխի ընկնել, թե ի՞նչ է տեղի ունենում կուլիսներում, խոսքը նաեւ եռակողմ հայտարարության հեղինակների կուլիսային շփումների մասին է, որոնք անշուշտ, կուզենան, որ Հայաստանում շարունակի իրենց հետ կապի մեջ մնալ այն մարդը, ում հետ պայմանավորվածություններ են ձեռքբերվել: Վարչապետի պատասխաններում թեեւ ամբողջովին չհերքվեց արտահերթ ընտրությունների հնարավորությունը՝ դրա ժամանակը փոխադրելով իր առաջարկած վեցամսյա ճանապարհային քարտեզի ժամկետը լրանալուց հետո քննարկումներին, այսինքն՝ հունիսի մեջ, բայց ինքնին պարզ է, որ դա ինչ-որ բանի համար ժամանակ շահելու քայլ է սոսկ: Ինչի՞ համար են ժամանակ շահում գործող իշխանությունները, ի՞նչ պայմանավորվածություններ կան, որոնց իրագործման համար եւս մի քանի ամիս է պետք՝ կասկածում ենք, որ դրանք եւս ցավոտ են լինելու: Եւ ինչո՞ւ է անկարող, անտարբեր ու համակերպված հայ ժողովուրդն այս վիճակին՝ պատասխան չունի այս հարցը: Հասկանալի է, որ ընդդիմության տարբեր թեւերի որակը չի ոգեւորում մարդկանց, բայց եւ ինքնակազմակերպման, վիճակից դուրս գալու ծրագրեր առաջարկող այլ խմբեր չեն նշմարվում, որոնք ապագայի ուրվագիծը հստակ կգծեին ու պատասխանատվություն կվերցնեին Հայաստանի ու Արցախի գլխավոր խնդիրների վերաբերյալ տեսակետներ հայտնելու: Եղածները, փաստորեն. ոչ մի պատասխանատվություն չեն վերցնում՝ եռակողմ հայտարարությամբ անհամաձայն հարցերը գոնե հեռվից շոշափելու, տեսնենք, թե ինչ կասեն նրանք փետրվարի 20-ի գրանդ-հանրահավաքին:

### Զուգահեռ աշխարհ

Խորհրդարանը, շարունակում ենք զարմանալ, արագ-արագ քննարկում եւ ընդունում է կարեւոր օրենքներ, որոնց քննարկմանը դժվար է անգամ հետեւել, մինչդեռ դրանցից շատերն ապագայում դեպի վատը կամ լավը փոխելու են մեր կյանքի շատ իրողություններ: Օրինակ՝ ԱԺ փոխխոսնակ **Ալեն Սիմոնյանը** որոշել է այնպիսի փոփոխությունների նախագիծ ընդունել տալ, ըստ որի զրպարտության եւ վիրավորանքի համար քաղաքացիական օրենսգրքով նախատեսված տուգանքները կարող են հասնել սովորական մարդու համար աստղաբաշխական գումարի՝ համապատասխանաբար մինչեւ 2մլն եւ 3 մլն դրամի, բա, հետո էլ սոցիալական ցանցերի կեղծ օգտատերերի զրպարտանքների դեմ ուղղված օրինագիծ է բերելու խորհրդարան: Քրեական դատավարության թվայնացման եւ նորացման օրենք են ընդունում: Առողջապահության նախարարության հեղինակած մի օրենքով ուզում էին մեր 14 տարեկան երեխեքին, ծնողներից գաղտնի, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի թեստ հանձնելու հնարավորություն ստեղծել՝ լրիվ ցնդել են, լավ է՝ պատգամավորները աղմուկ բարձրացրին եւ այդ նախաձեռնությունն առաջին ընթերցում չանցավ:

Բոլոր նախագծերի մասին չկարողանալով խոսել՝ կանգ առնենք խորհրդարանում քննարկված «Բարձրագույն կրթության եւ գիտության մասին» եւ հարակից 22 օրենքներում փոփոխությունների փաթեթին, որը տրամագծորեն տարբեր գնահատականների արժանացավ: Գլխամասային հանձնաժողովի նախագահին այն անվանում էր ամենահնարավոր ինքնավարություն ապահովող օրենք, մինչդեռ ընդդիմադիր խմբակցություններն այդ կարծիքին չէին՝ բոլորին բարկացրել էր այն դրույթը, որով բուհերի կառավարման 9 անդամից 5-ին նշանակելու էր լիազոր մարմինը, այսինքն ՝ ոլորտային նախարարությունը, բանը նույնիսկ հասավ ոչ կոռեկտ ձեւակերպումների: ԲՀԿ-ից **Նաիրա Զոհրաբյանը** նախկինում կատարվածի օրգանական շարունակություն համարեց այժմ կրթական համակարգում եւ բուհերում կատարվողը: Նրան ու մյուս ընդդիմախոսներին առավել քան քաղաքական միջամտություն էր թվում քաղաքական մարմնի՝ լիազորված հիմնարկի կողմից բուհի կառավարման խորհրդի 5 անդամի նշանակումը, ինչպես նաեւ խորհրդի առաջարկած երեք թեկնածուից մեկին ռեկտորի պաշտոնում նույն լիազոր մարմնի կողմից նշանակվելը: Նախաձեռնության հեղինակները (Հովհաննես Հովհաննիսյան, Մխիթար Հայրապետյան) համոզված են, որ օրենքում ներդրված ճկուն ֆինանսավորման համակարգը, երկրի ղեկավարների եւ կուսակցականների բացառումը կառավարման խորհուրդներում, ուսանողների կրեդիտների՝ ավելի հարմարավետ օգտագործման եղանակը, բուհերի ղեկավար մարմինների՝ առավել ինքնավարություն ապահովող ձեւավորման եղանակը մրցակցային միջավայր են ստեղծելու բուհերի համար, դեպի ապագա նայելու ցատկահարթակ ապահովելով կրթության համար: Ընդդիմախոսները, հակառակը, սա գրպանային փաթեթ էին համարում, բուհի կառավարման խորհրդի 9 անդամից 5-ի նշանակումն էլ՝ լիազոր մարմնի կողմից քաղաքական կախյալության հստակ ցուցիչ:

Այսպես թե այնպես, հավանաբար արժե, որ առանձին անդրադարձ ունենանք որեւէ անգամ նոր օրենքին, որն ըստ հեղինակների երկար ժամանակ՝ 4-5 տարի է պատրաստվել ու շատ մասնագետների կողմից, իսկ նորամուծությունները վերաբերելու են ուսանողության եւ դասախոսների՝ հանրության բավական մեծ շերտի:

## Ազատության հրապարակը կրկին դիմակայության շտաբ է

*Թեեւ ընդդիմադիր խմբերը փետրվարի 20-ին էին մեծ հանրահավաքի օր հռչակել, սակայն մի շարք իրողություններ «Հայրենիքի փրկության շարժման» կողմից վարչապետի թեկնածու նախանշված **Վազգեն Մանուկյանին** ստիպել էին երեկ Ազատության հրապարակ կանչել վերջին նոր զարգացումներով մտահոգ մարդկանց: Խոսքը համացանցում ի հայտ եկած այն հուշագրի մասին է, որով Գորիս-Կապան ճանապարհի որոշ հատվածներ հայտնվել են ռուսների պարեկության գոտում, չբացառելով նաեւ ադրբեջանցի զինյալների առկայությունը: Սյունիքը վտանգված համարելով՝ Վազգեն Մանուկյանը նախաձեռնում է մոտակա ժամանակի մեջ մեքենաներով երթ դեպի Սյունիք, որպեսզի դիմացինն իմանա, թե մեր ժողովուրդը կանգնած է Սյունիքի համար.«Եկեք այս հրապարակը դարձնենք մեր շտաբը, ես ինքս գոնե երկու ժամ՝ 5-ից 7-ը ամեն օր կլինեմ այստեղ: Եկեք հավաքվենք, քննարկենք: Պարտադիր չի հանրահավաք անենք»: Նրա խոսքով՝ այսուհետ ատելության դեմ լինելու է ատելություն, ագրեսիայի դեմ՝ ագրեսիա: Նա բոլորին առաջարկում է փոքր խմբեր, կոմիտեներ, ջոկատներ կազմել, որոնք բնակավայրերում կնախապատրաստեն մարդկանց փետրվարի 20-ի հանրահավաքին:*



# Հայաստանը կարո՞ղ է օգտվել Բայդենի խաղաղության նախաձեռնություններից

**ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ**

*Դետրոյթ, ԱՄՆ*



Պետքարտուղարությունում իր առաջին ելույթի ընթացքում նորընտիր նախագահ **Ջո Բայդենը** ներկայացրեց ԱՄՆ-ի նոր արտաքին քաղաքականության ուրվագծերը` ասելով. «Ամերիկան շրջադարձ է կատարում, դիվանագիտական աշխատանքը կրկին մեր արտաքին քաղաքականության ուշադրության կենտրոնում է լինելու` ինչպես երդմնառության խոսքումս ասացի` մենք վերանայելու ենք աշխարհի եւ մեր դաշնակիցների հետ հարաբերությունները եւ փորձելու ենք նորից աշխատել միասնաբար»:

Սա ամբողջովին հակասում էր իր նախորդ` **Դոնալդ Թրամփի** արտաքին քաղաքականությանը, որի գլխավոր սկզբունքն էր` «Ամերիկան առաջնային է», որը վերջին հաշվով դարձավ «Միայնակ Ամերիկան»: Պաշտոնն ստանձնելու առաջին օրն իսկ Բայդենը մի շարք գործնական հրամանագրեր ստորագրեց, որոնք չեղյալ են հայտարարում Թրամփի քաղաքականության հիմնական գծերը, որոնք մեկուսացրել էին Ամերիկան աշխարհից: Նա նաեւ ուղերձներ հղեց երկրագնդի իր բարեկամներին եւ թշնամիներին: Դրանցից ամենահատկանշականը խաղաղության նախաձեռնություններն էին:

Բիրմայում իրականացված հեղաշրջման առիթով նա ասաց. «Բիրմայի բանակայինները պետք է զիջեն իրենց դիրքերը եւ ազատ արձակեն կալանավորված պաշտոնական անձնավորություններին եւ ակտիվիստներին»:

Այս մոտեցումը լրիվ հակապատկերն էր իր նախորդի, որը հրապուրված էր համագործակցել բռնակալների եւ միապետների հետ, եւ ինչքան այդ խելագարները իշխանությանը կառչած էին, այնքան լավ էին ընթանում հարաբերությունները (օրինակներ կարող են ծառայել Հյուսիսային Կորեան, Սաուդյան Արաբիան եւ Թուրքիան):

Հատկանշական էր նաեւ, որ Բայդենն անդրադարձավ Եմենի քայքայիչ քաղաքացիական պատերազմին, որ սովամահության է հասցրել երկրի 30 միլիոն բնակչության 80 տոկոսին, սպանել տասնյակ հազարավոր մարդկանց եւ տեղահանել միլիոնավոր ուրիշների: «Այդ պատերազմը պետք է վերջ գտնի», հայտարարեց նորընտիր նախագահը:

Պատերազմը, որը քաղաքացիական է բնույթով, հրահրված է արտաքին ուժերի կողմից: Իրականում դա փոխանորդի (proxy) միջոցով իրականացված պատերազմ է Սաուդյան Արաբիայի, որ պաշտպանում է Եմենի տկար կառավարությանը եւ Իրանի միջեւ, որ ֆինանսավորում է Հութիներին, որոնք գրավել են երկրի մեծ մասը: Ակնկալվում է, որ Բայդենը անմիջապես դադարեցնելու է ինչպես զենքի, այնպես էլ ռազմատեխնիկական խորհրդատվության մատակարարումը Սաուդյան Արաբիային: Հարցի հեգնական կողմն այն է, որ երկիրը` թագավորությունը ողողված է կանխիկ փողով եւ կարող է գնել ամենաարդիական ռազմական համակարգերը, որ չի կարող օգտագործել, բայց կարիք ունի, որ մատակարարողն իրեն օգնություն ցուցաբերի: Թրամփն իր իշխանության օրոք պնդում էր, որ Եմենի պատերազմի համար Սաուդյան Արաբիային զինատեսակների վաճառքը նոր աշխատատեղեր է ստեղծում ԱՄՆ-ի պաշտպանության բնագավառում: Ինչպիսի՜ մարդասիրական մոտեցում աշխարհի ամենազարհուրելի ողբերգությանը:

Նախագահ Բայդենի խաղաղասիրական նախաձեռնություններն արդեն իսկ իրենց ազդեցությունն ունեցել են աշխարհում: Երկար ժամանակ Լիբիայում ընթացող պատերազմը վերջերս ավարտվել է, եւ հաշտություն է կնքվել գնդապետ Հաֆթարի եւ Ֆաեզ էլ-Սառաժի ղեկավարած «Ազգային համաձայնության» կառավարության միջեւ:

Որոշ բարեփոխումների ակնկալիքով, Թուրքիան, իր հերթին, դիմել է ՄԱԿ-ին Կիպրոսի հարցի շուրջ բանակցությունները վերսկսելու խնդրանքով եւ Բրյուսել է ուղարկել իր արտգործնախարար Չավուշօղլուին վերականգնելու Եվրոմիության հետ արդեն բավական ժամանակ մահամերձ հարաբերությունները:

Վերոնշյալ նախաձեռնությունների շարքում Բայդենը նաեւ իր առաջին ուղերձներն է հղել Ռուսաստանին եւ Չինաստանին, ակնարկելով գոյություն ունեցող տարաձայնություններին եւ դրանց հնարավոր կարգավորմանը:

Այս բոլորի լույսի ներքո, արդարացի կլինի հարցնել, թե Մ. Նահանգների նոր վարչակազմը համընդհանուր, գլոբալ խաղաղությա՞նն է կողմնակից, թե՞ պարզապես անվերջանալի պատերազմների թիրախները ավանդական հակամարտությունների պահպանմանը վերադարձնելուն:

Հարցի պատասխանը տալիս է **Ուիլյամ Աստորը**, «The Nation» պարբերականի փետրվարի 2-ի համարում գրելով. «Նախագահ Բայդենի նոր վարչակազմն ու խորհրդատուների անձնակազմը բավականին լավ հագեցած է վետերան գնդապետներով, վերակազմավորված նեոկոններով, անզիջող ռազմատենչ բազեներով եւ պատերազմի հրձիգներով: ...«Պաշտպանության» նպատակների (ինչպես ընդունված է այս երկրում անվանել պատերազմի ծախսերը) համար հատկացումները 2021-ի ֆինանսական տարում մնում են ռեկորդային 740,5 միլիարդ դոլարի մակարդակում: Իսկ Ռուսաստանի եւ Չինաստանի (առանձին-առանձին, թե երկուսը միասին) հետ նոր սառը պատերազմի վերաբերյալ խոսակցությունները Պենտագոնի միջանցքներում նշված ֆինանսավորումը ավելացնելու մթնոլորտ են ստեղծում»:

Հոդվածի հեղինակը Բայդենի վարչակազմին 9 խորհուրդ է տալիս պատերազմի ուղուց դեպի խաղաղ նպատակներ անցնելու համար: Դրանցից մեկով նա հատկանշականորեն հիշեցնում է Բայդենին հետեւյալը. «Առնվազն մեկ անգամ ուշադրություն դարձրեք նախագահ Դուայտ Էյզենհաուերի 1961 թվի պաշտոնաթողության առիթով արտահայտած խոսքերին եւ կամքի ուժ ու եռանդ ցուցաբերեք վերահսկելու եւ սանձելու ռազմա-արդյունաբերական համակարգի ախորժակը»:

Մ. Նահանգների տնտեսությունը միաձուլված է ռազմա-արդյունաբերական համակարգին, եւ բոլոր իշխանությունների համար Թրամփի տրամաբանությունը, թե «Պատերազմը պաշտպանական աշխատատեղեր է ստեղծում», մնում է ուժի մեջ: Այնպես որ, հակառակորդներին կամ թշնամիներին պետք է դիմակայել կամ, եթե չկան, ստեղծել, որպեսզի «Բոյինգի» եւ «Ռեյթեոնի» պաշտպանական կապալառուները գոհ ու երջանիկ լինեն:

Քանի որ Բայդենը որպես թիրախ ընտրել է հավերժական, վերջ չունեցող պատերազմները, հայերս պետք է մեր հույսը սեւեռենք Բայդենի թիմից եւ պետքարտուղարության անձնակազմից դուրս ժայթքող որոշ դրական ազդանշանների վրա, կապված հին ու նոր խնդիրների հետ, որոնց թվում են Հայոց ցեղասպանության ընդունումն ու ճանաչումը եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի լիազորությունների վերականգնումը:

Թուրքիայի նախագահ **Ռեջեփ Թայիփ Էրդողանն** արդեն զգում է, թե ինչ է նախապատրաստվում եւ միջոցներ է ձեռնարկում միջազգային հասարակության գործողությունների առաջքն առնելու համար:

Սկսենք նրանից, որ Թուրքիան է այդ անվերջ պատերազմների գլխավոր հրահրիչը, որ խժդժություններ եւ տագնապալի իրադարձություններ է ստեղծում Սիրիայում, Իրաքում, Լիբիայում եւ վերջերս նաեւ Լեռնային Ղարաբաղում:

Գուցե Բայդենի վարչակազմի համար ամենաասոսկալի մարտահրավերն էլ հենց Թուրքիային սանձահարելն է լինելու: Ղարաբաղյան ճակատում նորությունն այն է, որ Մինսկի խմբի (Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Մ. Նահանգների) համանախագահները այցելելու են տարածաշրջան եւ հատկապես պատերազմի հետեւանքում ավերված վայրերը, որպեսզի շարունակեն իրենց առաքելությունը: Պետքարտուղարությունը հայտարարություն է տարածել առ այն, որ «Մ. Նահանգները աջակցում է ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքներին` նպատակ ունենալով կողմերին հասնել խնդրի վերջնական կարգավորման` հիմնված Հելսինկիի վերջնական որոշման սկզբունքների վրա, որը պահանջում է զերծ մնալ ռազմական ուժի գործադրումից եւ հարգել ինչպես տարածքային ամբողջականության, այնպես էլ ժողովուրդների ինքնորոշման իրավունքները»:

Նման սկզբունքներ դավանող քաղաքագետները փաստի առաջ են կանգնելու Ղարաբաղի հարցում, քանի որ իրենց հենց առաջին սկզբունքը (ուժի գործադրումից զերծ մնալը) խախտվել է, ինչը նպաստել է լուծելու երկրորդ սկզբունքը, որն է` Ադրբեջանի տարածքային ամբողջականության խնդիրը, որն արդեն ինքնին լուծվելու է: Նրանց մնում է լուծել Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի հարցը:

Ադրբեջանի նախագահ **Իլհամ Ալիեւի** համոզմամբ Ղարաբաղի կարգավիճակի հարցը արդեն լուծված է: Ռուսաստանի նախագահ **Վլադիմիր Պուտինի** կարծիքով այն դեռ որոշված չէ եւ դրան կանդրադառնան ավելի ուշ:

Այժմ երբ մյուս երկու համանախագահները վերստանձնել են իրենց պարտականությունները, նրանք անպայման իրենց խոսքը կասեն քննարկումների ժամանակ: Ֆրանսիայի խորհրդարանը արդեն բանաձեւ է ընդունել ճանաչելու Արցախի անկախությունը:

Ակնկալվում է, որ այդ բանաձեւը իր անդրադարձը կունենա հետագա քննարկումներում: Ամերիկայի դիրքորոշումը դեռ հստակ չէ, բայց հաշվի առնելով տարածաշրջանի խնդիրները, կարելի է ասել, որ Ռուսաստանի դիրքորոշմանը հակադիր է այն: Բացառելով մետասաներորդ պահի փոխզիջումները, վստահ կարելի է ասել, որ Ամերիկան ի վերջո համամիտ է լինելու Ֆրանսիայի հետ, քանի որ երկու կողմերն էլ դժգոհում են, որ դուրս են մնացել պատերազմին հաջորդած կարգավորման գործընթացից: Նրանց մասնակցությունը հիմնականում կենտրոնանալու է Ռուսաստանի եւ Թուրքիայի կողմից Հայաստանին պարտադրված 9 կետերից բաղկացած հրադադարի կենսագործմանը: Հայաստանը հնարավորություն ունի այստեղ դիվանագիտական հմտություն բանեցնելով որոշ առավելություններ ձեռք բերել մի շարք անհստակ եւ անարդար ձեւակերպումների հարցերում:

Որպես գլոբալ դիվանագիտական աշխարհի անդամ երկիր, Թուրքիան բացի Կիպրոսի հարցի շուրջ բանակցությունների վերսկսումից եւ Եվրոմիությանը մերձենալու փորձերից, հանդես է եկել նաեւ մի շարք այլ նախաձեռնություններով: Անկարան պատրաստակամություն է հայտնել «կանոնավորելու հարաբերությունները Հայաստանի հետ»: Այս մասին հոդված է հրատարակել «Վաշինգտոն փոստը»: Իսկ թուրք քաղաքական մեկնաբան **Ամբերին Զամանը** «Ալ-Մոնիտորի» փետրվարի 1-ի համարում անդրադառնալով այդ պատրաստակամությանը` իր հոդվածը վերնագրել է «Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելը դատարկ խոսակցություն է», որ կարծես ամեն ինչ ասում է: Հոդվածի բովանդակությունը շատ բան է պարզաբանում: «Քաղաքագետներն ասում են, որ Թուրքիայի մեծահոգությունը ավելի շատ կապ ունի Վաշինգտոնի հետ իր խաթարված հարաբերությունները շտկելու հետ, առանց իրենից պահանջված զիջումները կատարելու»:

Զամանը հարցազրույցներ է ունեցել հայ եւ օտար մի քանի դիվանագետների հետ եւ գտնում է, որ Թուրքիայի մտադրությունը անկեղծ չէ եւ նման է փորձական փուչիկի, որը քաղաքական նպատակահարմարության տարրեր է պարունակում իր մեջ: Նրան պատասխանելով մի հայ դիվանագետ ասում է. «Վրդովեցուցիչ է, որ մի երկիր` առանց մեղավորության դույզն զգացումի իր նախնիների կատարածի համար` մի ամբողջ դար շարունակի ցեղասպանական մտադրությունները, փոխանակ զղջալու եւ առերեսվելու այդ հանցագործության հետ»:

Ի՞նչ կարող է Թուրքիան առաջարկել Հայաստանին կարգավորելու համար հարաբերությունները նրա հետ, եթե շրջափակման վերացումն է եւ հաղորդակցության միջոցների բացումը, ապա նշենք, որ դրանցից Թուրքիան ավելի շատ է օգտվելու, քան Հայաստանը: Շրջափակումը վերացնելով Թուրքիան ուղղելու է միջազգային օրենքը խախտելու իր սխալը: Ավելին, Թուրքիայի ղեկավարները մեկ դարուց էլ ավելի ծրագրում են տիրանալու Հայաստանի Սյունիքի շրջանին կամ անցք ապահովելով իրականացնելու իրենց պանթուրանական ծրագրերը:

Հաշվի առնելով, որ 9 կետերից բաղկացած հրադադարի հայտարարությունն արդեն տարանցիկ միջանցք է տվել Թուրքիային, ապա նրա նպատակներից մեկը կատարված պետք է համարել:

Հայաստանի շահերից չի բխում ընդունել որեւէ «Ձիթենու ճյուղ» Անկարայից, որը Հայաստանի հետ հարաբերությունները կանոնավորելուց առաջ դժվարին ճանապարհ ունի անցնելու եւ բարելավելու հարաբերությունները Վաշինգտոնի հետ:

Հուսանք, որ նախագահ Բայդենը իր խոստումի տերը կլինի եւ կճանաչի Հայոց ցեղասպանությունը: Իսկ Մինսկի խմբի իր համանախագահին կթելադրի Վաշինգտոնի բարյացակամ դիրքորոշումը փոխանցել մյուսներին: Սրանք կարող են լինել այն դիվիդենտները, որ Հայաստանը ձեռք կբերի Բայդենի խաղաղության նախաձեռնություններից:

Անգլ. թարգմ.`
ՀԱԿՈԲ ՇՈՒԼԻԿՅԱՆԸ
(Armenian Mirror-Spectator)

# ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ, ՄԱՏՆԻՉՆԵՐ, ԴԱՒԱՃԱՆՆԵՐ

*Վերընթերցելով Օտեանի «Թիւ 17 խաֆիյէն» վէպը*

ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ

Պատանեկութեանս կարդացեր էի, Ակաթա Քրիսթիի եւ ուրիշներու գաղտնիոստիկանական վէպերու շարքին՝ Երուանդ Օտեանի «Թիւ 17 խաֆիէն» գործը: Կը յիշեմ՝ «Զարթօնք»ի թերթօնային էջերէն հաւաքուած եւ կազմուած երկու կամ երեք հատոր էր, հաստ եւ ամուր կողքով, բազմաթիւ ընթերցողներու ձեռքէն անցած բազմատանջ էջերով: Զայն մէկ շաբաթով վարձու առեր էի Նոր Հաճըն թաղամասի մէջ գտնուող գրատուն եւ (չզարմանաք) սափրատուն Սամի Կարոյէն, որ այդ օրերուն եւ կարծեմ մինչեւ 90-ական թուականները վարձու գիրք կը տրամադրէր շատ մատչելի գինով, ինչպէս «Գրատուն Նուպար»ը Պուրճ Համուտի Արաքս փողոցին սկիզբը եւ Թրաս թաղի կողմերը գտնուող Էմմի-օղլուի (այդպէս կ՚ըսէին) գրախանութը, որ նաեւ գործածուած դասագիրք կը գնէր ու կը ծախէր: (Ի դէպ, շնորհակալութեան արժանի աշխատանք պիտի ըլլար լիբանանահայ գրախանութներու եւ յատկապէս վարձու գիրք տրամադրող գրատուներու պատմութեան ուսումնասիրութիւն մը ունենալը: Անոնք, մեր օրաթերթերուն հետ, անգնահատելի դեր կատարած են լիբանանահայոց մէջ հայախօսութիւնն ու հայերէնաճանաչութիւնը տարածելու, արմատաւորելու տեսակէտէն): Մինչ այդ կարդացեր էի Օտեանի «Թաղականին կնիկը» եւ այլ գործեր, բոլորն ալ՝ երգիծական, այդ տարիքիս տպաւորութեամբ՝ քոմիք, կամ խնդալիք, ինչ որ զիս Օտեանին կապող գլխաւոր հատկանիշն էր այն ժամանակ: «Խաֆիէ»ի ընթերցումս, միշտ կը յիշեմ, այդ առումով զիս յուսախաբ ըրած էր, սակայն փոխարէնը՝ գրեթէ ամբողջութեամբ երկխօսութիւններէ բաղկացած ըլլալուն՝ բաւարարած էր ընթերցելու ծարաւս:

Յետագայ տարիներուն, երբ Օտեանը իմ ամենասիրելի հեղինակն էր դարձեր արդէն ու կարդացեր էի անոր գրեթէ բոլոր ստեղծագործութիւնները, իսկ «Անիծեալ տարիներ»ուն մասին ալ, շատ աւելի ուշ, հրապարակային դասախօսութիւն մըն ալ տուեր էի, բնաւ միտքէս չէր անցած վերընթերցել «Խաֆիէ»ն՝ անշուշտ պատանեկան դեռ յամեցող տպաւորութեանս տակ: Միայն ասկէ մի քանի ամիս առաջ, covid-19-ի պարտադրած ինքնամեկուսացումի առաջին օրերուն, բացառապէս իբրեւ ժամանցային հետաքրքրութիւն, կրկին ձեռք առի 2000-ին Երեւանի Գրականութեան եւ արուեստի թանգարանին կողմէ եւ Յարութիւն Սիմոնեանի մեկենասութեամբ լոյս տեսած եռահատոր «Խաֆիէ»ն, որուն ենթավերնագիրն է՝ «Ժամանակակից պատմական վէպ»: Միայն Օտեանի խորաթափանց միտքը կրնար այդպիսի բնորոշում տալ՝ պատմութեան մէջ մնալու, պատմութեան համար կարեւոր, ներկայ ժամանակին պատահած, սակայն ապագային միտուած վէպ...

Այս անգամ յափշտակութեամբ, ապշանքով եւ ընդվզումով կարդացի գիրքը, նաեւ՝ ամօթով:

Աշխարհացունց պատերազմի նախօրէն է, արեւմտահայութեան օրակարգի գլխաւոր հարցը Արեւելեան Նահանգներու բարենորոգումներու խնդիրն է, Հոֆն ու Վեսթենենկը ժամանելու վրայ են, երիտթուրքերու կառավարութիւնը՝ կատաղութեան գագաթնակէտին: Պատրիարքարանն ու Ազգային ժողովը իրարանցման մէջ են. տեղեկութիւն կայ, որ Պատրիարքարանէն Մեծ պետութիւններու դեսպանատուներուն ուղղուած գաղտնի տեղեկագիրներ գողցուած եւ թուրքական կառավարութեան փոխանցուած են: Ո՞վ է գողը, որո՞նք են անոր մեղսակից գործակալները, խաֆիէները: Վէպին առաջին էջերէն սեղանին կը դրուի այս գլխաւոր հանգոյցը, plot-ը: Աւելի ուշ կը պարզուի երկրորդը մըն ալ. թրքական ոստիկանութեան գաղտնի գործակալ Արշաւիր Սահակեանը (բուն անունով՝ Արթիւր Հանօեան-Եասեան) Հնչակեան կուսակցութեան Քոստանցայի (Ռումինիա) գաղտնի ժողովէն առաջին ձեռք տեղեկութիւններ կը փոխանցէ Բ. Դուռ՝ Իթթիհատի դէմ ծրագրուող ապստամբութեան եւ ահաբեկչութիւններու մասին...

Մինչ այդ Թուրքիան Գերմանիոյ կողքին եւ ընդդէմ Դաշնակից երկիրներու պատերազմի մէջ կը մտնէ, եւ հայութիւնը միս-մինակ, դէմ-դիմաց կը յայտնուի Թուրքին դէմ՝ գոյութենական օրհասի մէջ, ուռկանի մէջ թպրտացող ձուկի նման: Կը սկսին հալածանքները, միաժամանակ՝ խրախճանքը բոլոր տեսակի գործակալներու, լրտեսներու եւ դաւաճաններու: Հա՜յ խաֆիէներու: Գործ շատ կայ այդ տականքներուն համար: Արեւմտահայութեան մտաւորական, քաղաքական, կուսակցական ու եկեղեցական ամբողջ սերուցքը հոն՝ Կ. Պոլսոյ մէջ դիւրին թիրախ է խաֆիէներուն համար: Ցուցակներ կը կազմեն, հասցէներ կը ճշդեն, կը ձերբակալեն կամ կ՚օգնեն ձերբակալելու: Գարեգին Նժդեհի ըսած «հայու տականքը» գործի վրայ է:

Բոլորը՝ տիպականացուած, տականք կերպարներ, անհայրենիք, ապազգային, անմարդկային սրիկաներ, որոնք իրարու ձեռքէ խլելով հայ ղեկավարներու, զինուորական ծառայութենէ խոյս տուած հայ երիտասարդներու «որսը», յանուն դրամի, զուարճութիւններու, ոստիկանապետերու եւ Թալէաթի աչքը մտնելու «մրցանակի», մատնչութիւն կ՚ընեն շարունակ, նոյնիսկ կը հրահրեն, որպէսզի թուրքերը յալածանքներու դիմեն իրենց իսկ ազգակիցներուն դէմ:

Միաժամանակ չեն մոռնար իրարու դէմ դաւելու, «որսը» իրարու ձեռքէ խլելու եւ ներկայացնելու թուրքերուն: Եւ այդ մարդիկ, այդ բոլոր գործակալները, մատնիչներն ու լրտեսները (Օտեան զանոնք կը ներկայացնէ ծագումով արաբերէն «խաֆիէ»՝ «գաղտնի» բառով)՝ որոնք կենդանի, ապրող դաւաճանները եղած են պոլսահայութեան, ինչպէս՝ Արթին Մկրտիչեանը («Հարուն»), Արշաւիր Սահակեանը, Հմայակ Ադամեանը, Հիտայէթը (կարգազուրկ եկեղեցական), Աստիկ Մարկոսեանը (բո՛ւն՝ թիւ 17 խաֆիէն, Ասատուր Մաթէոսեանը), Էմին, Աբգար եւ Սերովբէ էֆենտիները, Արշակ Այյանը, Էլիզ Մալեանը եւ ուրիշներ: Օտեանը անոնց կերպարը չի ներկայացներ նկարագրութիւններով, այլ՝ անոնց երկխօսութեանց ընդմէջէն ու շնորհիւ, աւելի վառ դարձնելով անոնց նկարագիրը, աւելի ճիշդ՝ նկարագրի չգոյութիւնը: Հոս կարիք կա՞յ յիշեցնելու, որ Օտեան լաւագոյն վարպետն է մեր գրականութեան մէջ dialog-ի, երկխօսութեան:

Մէկ խօսքով՝ վաւերագրական վէպ մը՝ «Խաֆիէ»ն, ուր իւրաքանչիւրը կը ներկայանայ զիրար գերազանցող ստորութեան, մութ բնազդներու եւ դաւաճանական մոլուցքի համապատկերին մէջ:

Բայց ոչ միայն անոնք՝ խաֆիէներն են այս վէպին մէջ ներկայ, այլ նաեւ ազգին մեծերը՝ Զաւէն Պատրիարք, Գրիգոր Զոհրապ, Վարդգէս, Ակնունի (Խաչատուր Մալումեան), Արամ Անտոնեան, Գարեգին Փաստրմաճեան, Եղիշէ Դուրեան արքեպիսկոպոս, Ռուբէն Զարդարեան, Վահան Թէքէեան, Թէոդիկ, Թօլոլեան Երուանդ, Թոշիկեան Վահան, Կոմիտաս, Յարութիւն Ճանկիւլեան, Ոսկան Մարտիկեան, Շաւարշ Միսաքեան, Աբիկ Մուպահեաճեան, Մուրատ, Գաբրիէլ Նորատունկեան, Յարութիւն Շահրիկեան, Ստեփան Սապահկիւլեան, Սարգիս Սուին, Նազարէթ Տաղաւարեան, Փառամազ, Վահան Փափազեան (Կոմս), Տիրան Քէլեկեան, Բիւզանդ Քէչեան, Մաղաքիա արք. Օրմանեան եւ ուրիշներ, շատերը՝ որպէս գործող, ոմանք՝ յարակից դէմքեր: Ամբողջ եւ ամբողջական սերուցք մը, որուն մեծ մասը աքսորուեցաւ, ինչպէս ինքը՝ Եր. Օտեան, շատերը մորթուեցան կամ գանկակոտր եղան... Օտեանը հազուագիւտ փրկուողներէն է, նախախնամութեան կարգադրութեամբ, թերեւս... որպէսզի վկայէ գալիք սերունդներուն համար:

Բացառիկ են մանաւանդ Թալէաթի եւ Զոհրապի երկխօսութեան երկու դրուագները՝ տեսակէտներու բախումը Դահիճին ու Զոհին միջեւ, իր եւ իր ժողովուրդին մօտալուտ մահը զգացող Դատապաշտպանի եւ նոյն ժողովուրդին սպանդը ծրագրած պետական Ոճրագործի միջեւ: Եւ բարձրակէտը այդ դաժան զրոյցի՝ Թալէաթի համբոյրը Զոհրապին՝ բաժանումի վերջին պահուն... խորունկ տարակուսանքի մէջ թողլով մեծ գրողը:

Նպատակս Օտեանի գործին գրականագիտական քննութիւնը չէ. այդ բանը հմտօրէն ըրած է եռահատորին Յառաջաբանին հեղինակ՝ համալսարանական ընկերս՝ պրոֆ. Սամուէլ Մուրադեանը, մինչ միւս համակուրսեցին՝ Հեղինէ Մուրադեանը, բծախնդրօրէն կատարած է տեքստը տպագրութեան ներկայացնելու դժուարին աշխատանքը: Նպատակս Օտեանի հանճարին վերընդգծումն է՝ մեր ժողովուրդի պատմութեան ամենադժբախտ պահերէն մէկը այդքան ճշմարիտ եւ ճշմարտանման ներկայացնելու, առանց ողբի եւ արցունքի Մեծ ողբերգութիւնը մատուցելու եւ, յատկապէս, դաւադիրներու դաւաճանութիւնը՝ մինչեւ զիրենք վարձած թուրքերուն իսկ ձեռքով իրենց դժնի մահուան արժանանալու ամբողջ պատմութիւնը:

Արդարեւ, «Խաֆիէն» Օտեանի մեծ գործերէն մէկը, իրապաշտ, վաւերագրական, վաւերական, անողոք: Գործ մը, որ թերթօնային ըլլալուն եւ այդ ժանրի բոլոր պարտադրանքներուն տուրք տալով հանդերձ, մեզի ձգած է մեզ զմեզ ճանչնալու, մեր յիմարութիւնները, մեր անխելքութիւնը, մեր մէջի դաւաճանները ճանչնալու պատգամը: Կ՚ըսեն, թէ երգիծագիրներն ու երգիծանկարիչները սրատես, անողոք մարդիկ են, որոնք ճշմարտութիւնը դիտել-որսալու մոլուցքին զոհ կրնան դարձնել նոյնիսկ իրենց բարեկամները, ինքզինքնին անգամ: Օտեանի պարագային մենք ունինք մէկը, որ բոլորէն լաւ որսացած է իր ազգի՛ն սրիկաները, տականքները, հայելին բացած է անոնց դէմքին եւ ցոյց տուած է մեզի, որպէսզի հասկնանք, որ մենք միայն զոհ չենք, ոչ ալ միայն հերոս եւ հերոսապաշտ, այլեւ՝ դաւաճաններ ծնած, զանոնք հանդուրժած ազգ, հազուադէպօրէն զանոնք պատժած, զգետնած ազգ...

Ինքնաճանաչումի այդ դառնահամ դասը այսօր ալ, 44-օրեայ պատերազմէն, մեր պարտութենէն ետք, մեզի պէտք է սորվեցնէ հերոսականին հետ գիտակցելու, որ մեր ամբողջ պատմութեան ընթացքին ունեցած ենք եւ ունինք նաեւ դաւաճաններ, որ պէտք է ճանչնանք մեր մէջի գործակալները, որ պէտք է գիտնանք խաֆիէները դիմակազերծելու, զանոնք արմատախիլ ընելու գործը:

Հանճարեղ է Երուանդ Օտեանը: Եթէ մեր խեղճուկ թերթերու խմբագիրներուն փոխարէն անիկա ունենար Եւրոպայի հրատարակիչները որպէս պատուիրատու, համաշխարհային գրականութեան աստղ կը հռչակուէր, անկասկած:

«Թիւ 17 խաֆիէն» նորէն պէտք է հրատարակել, ճիշդ կամ հենց այս օրերուն: Վերջին՝ 4-րդ հրատարակութեան տպաքանակը լրիւ սպառած է վաղուց: Կը նշանակէ՝ հայերս պէտքը ունինք մենք մեզ աւելի լաւ ճանչնալու: Հպարտանալու շատ բան ունինք, նաեւ՝ ամչնալու:






### Մատենագիտական

«Թիւ 17 խաֆիէն» վէպը առաջին անգամ որպէս թերթօն լոյս տեսած է Պոլսոյ «Վերջին լուր» օրաթերթին 1919-1920-ի թիւերուն մէջ: 1938-ին 4 հատորով հրատարակուած է Գահիրէի «Սինէվէպ» տպարանին մէջ: 1957-ին Պէյրութի «Զարթօնք»ը թերթօնի ձեւով հրատարակած է զայն: Վերջինը, ինչպէս ըսուեցաւ, 3 հատորով հրատարակուած է Չարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարանին (յատենի տնօրէն՝ Հենրիկ Բախչինեան) կողմէ, 2000-ին:

**«ՊԱՅՔԱՐ», 7 փետր., 2021թ.**

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Ռուբեն Գինի. Հայկական փնտրտուքները Չինաստանում

*Կինոբեմադրիչ, դերասան, հետազոտող եւ գրող Ռուբեն Գինին (Գաստարյան) սկսել է կինոնկարներ նկարել 5 տարեկանից: Նրա առաջին 8 մմ-ոց ֆիլմը ցուցադրվել է Մոսկվայի մանկական կինոփառատոնում: Դպրոցն ավարտելուց առաջ հաճախել է Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտ: 2002 թվականին ընդունվել է Մոսկվայի կինեմատոգրաֆիայի պետական ինստիտուտ (ՎԳԻԿ): Կրտսեր օգնականն է եղել այնպիսի ռուս ռեժիսորների, ինչպիսիք են Նիկիտա Միխալկովը եւ Իգոր Մասլեննիկովը: 2005-ին տեղափոխվել է Չինաստան, որտեղ որպես գեղարվեստական ղեկավար անդամակցել է «Կուիյու արտադրական տուն» միջազգային գովազդային ընկերությանը: Այս ընթացքում նկարահանել է ավելի քան 15 գովազդային հոլովակ այնպիսի միջազգային ընկերությունների համար, ինչպիսիք են «Պանասոնիկը», «Ասահին», «Մքդոնալդսը», «Շիսեյդոն», «Հոնդան» եւ «Տոշիբան»: 2010 թվականից Ռուբենը մասնակցել է մի շարք չինական հեռուստասերիալների եւ գեղարվեստական կինոնկարների արտադրությանը: Նա «Նեշընըլ ջեոգրաֆիքի» անկախ լուսանկարիչ է եւ մի շարք գիտական հոդվածների հեղինակ: Ֆիլմերից են՝ «Սեւ խավիար» (1999), «Ստորին խորքեր »(2003), «Էռնան դյու Սթրուբերգ» (2005), «Համազգային մշակութային ֆորումը» (2008), «Աշխարհի քաղաքներ. Շանհայ» (2008), «Անդին. հայկական ճանապարհորդության տարեգրություններ» (2014): 2016-ին Երեւանում հրատարակել է հոդվածների ժողովածու (ռուսերեն)՝ հայ-չինական միջնադարյան պատմական աղերսների վերաբերյալ: Վերջերս ՀՀ ԳԱԱ «Բանբեր հայագիտության» գիտական հանդեսում լույս տեսավ Ռուբեն Գինիի «Դոն Պեդրոյի՝ Սահրատի որդու գործը» ռուսերեն ուսումնասիրությունը, որը ներկայացնում է 18-րդ դարում մի հայի նկատմամբ հարուցված գործը Մեքսիկայում՝ այդ երկրի Ազգային արխիվում գտնվող նյութերի հիման վրա...*

**-Սիրելի՛ Ռուբեն, մեր ընկերությունը սկսվեց հայ-չինական պատմական հարաբերությունների հանդեպ մեր ընդհանուր հետաքրքրության շնորհիվ, ուստի մեր զրույցը սկսենք այդ կետից: Ինչպե՞ս հայտնվեցիր Չինաստանում, ի՞նչ տվեց քեզ Չինաստանը:**

-Ասում են, թե Չինաստանում կա երկու տեսակի օտարերկրացի. նրանք, ովքեր եկել էին որոշակի նպատակով, եւ այնպիսիք, որոնք պատահաբար են հայտնվել այնտեղ: Ենթադրում եմ, որ ես պատկանում եմ երկրորդ խմբին: Շատ տարիներ առաջ ես եկա մայրցամաքային Չինաստան կարճամետրաժ գեղարվեստական կինոնկար նկարահանելու համար՝ որպես համալսարանական աշխատանքի մի մաս, եւ Շանհայում հանդիպեցի մի խոշոր առեւտրային ընկերության տնօրենի: Պարոն Յանսանը կարճ զրույց ունեցավ ինձ հետ եւ ինձ հրավիրեց աշխատել իր հետ: Կարծում էի, թե նա կատակում է, քանի որ ես ընդամենը 18 տարեկան էի, բայց պարոն Յանսանը բավական լուրջ էր: Վերադարձա Մոսկվա, եւ մի քանի ամիս անց որոշեցի տեղափոխվել Չինաստան: Այդ ժամանակ Չինաստանում ոչ ոքի չէի ճանաչում, չինարեն չէի խոսում, իմ անգլերենը նույնպես բավականաչափ լավ չէր: Բայց երիտասարդ էի ու համարձակ: Հիմա խոսում եմ չինարեն, բայց վախենում եմ, որ առաջվա պես համարձակ չեմ: Չինաստանն ու չինական մշակույթը ինձ հնարավորություն են տվել հասկանալու Արեւելքի ոգին: Ես մեծացել եմ Շանհայում եւ յուրացրել եմ կյանքի վերաբերյալ ասիական հայացքները: Որպես հայ ես արտահայտում էի իմ հույզերը, զայրույթ կամ դժգոհություն ցուցաբերում ոմանց նկատմամբ, բայց Չինաստանում այս բոլոր արտահայտությունները համարվում են թուլություն: Սկզբում լավ չէի ըմբռնում, բայց տարիների ընթացքում վերջապես կարողացա հասկանալ, թե ինչպես պետք է ճիշտ վարվել այդ հասարակության մեջ: Եվ կարգապահությունը: Չինաստանում կարգապահության բարձր արժեքը ինձ ստիպեց է՛լ ավելի կազմակերպված եւ լուրջ վերաբերվել որոշ բաների՝ հատկապես աշխատանքի եւ կրթության ոլորտում: Իսկապես շնորհակալ եմ այդ հատկությունների համար, որոնք Չինաստանը սովորեցրել է ինձ:





**-Շատերը կցանկանան իմանալ. ինչո՞ւ այս անունը՝ Գինի:**

-Չինական մշակույթում անունները հաստատուն չեն: Որոշ մարդիկ իրենց կյանքի ընթացքում մի քանի անգամ փոխում են իրենց անունը: Իմ դեպքում կինոյի կանոններն իրենցը թելադրեցին, երբ չինական հիերոգլիֆները չկարողացան տառադարձել իմ հայկական «Գաստարյան» անունը: Դրա համար պահանջվում էր չորս կամ հինգ չինական գաղափարագիր, երբ չինական անունները սովորաբար օգտագործում են ընդամենը երեքը: Ես ստիպված էի համապատասխանաբար փոխել իմ անունը՝ կարողանալու համար ընդգրկվել չինական կինոարդյունաբերության մեջ: Մարդիկ չպետք է զարմանան, որ չինական որոշ իշխանություններ, անգամ ոստիկանությունը, օտարերկրացիներից պահանջում են չինական անուններ վերցնել: Դա միանգամայն օրինական է: Այդպիսով ծնվեց Ռուբեն Գինին:

**-Հայերեն «գինի» բառի հետ կապը դիտավորյա՞լ էր:**

-Ես ուզում էի պահել իմ սկզբնատառերը ու փորձեցի չկորցնել կապը հայրենիքի հետ նույնիսկ անվան մեջ:

**-Մինչ այժմ քո ամենից նշանակալից կինոնախագիծը եղել է «Անդին. հայկական ճանապարհորդության տարեգրություններ» ֆիլմը, որը հայկական ներկայության պատմությունն է Հեռավոր Արեւելքում վաղ միջնադարից մինչեւ 1800-ականների սկիզբը: Դա հայոց պատմության վերաբերյալ աննախադեպ վավերագրական ֆիլմ է, որը նկարահանեցիր 11 երկրներում: Պատմի՛ր խնդրեմ քո այդ մեծ «արկածախնդրության» մասին:**

-Երկար տարիներ անցկացնելով Չինաստանում՝ ես հանդիպում էի աշխարհի այս անկյունում հայկական ներկայության վերաբերյալ զարմանալի վկայությունների: Մի անգամ հոդված կարդացի այն օտարերկրացիների մասին, որոնք հայկական հագուստով էին մուտք գործում Չինաստան՝ Մինգ հարստության ժամանակաշրջանում: Ավելի ուշ իմացա, որ Շանհայի կենտրոնական զբոսայգում կա մի հնգամյա հայ տղայի տապանաքար: Ոչ ոք չէր կարող բացատրել այդ տապանաքարի հիմքում առկա պատմությունը, ոչ ոք չգիտեր, թե ով է եղել այդ փոքրիկ տղան եւ ինչու է մահացել այդքան կանուխ: Ավելի ուշ իմացա Սիան թանգարանում պահպանված հայտնի նեստորական հուշակոթողի մասին, որի վերին մասում պատկերված է զուտ հայկական կենաց ծառ՝ սուրբ խաչ: Այս ամենն դրդեցին հնարավորինս ամեն բան պարզել Չինաստանում ապրած հայերի մասին: Բառացիորեն ամեն ինչ, ամեն մի տեղեկություն: Այդ գաղափարն ինձ համար մտասեւեռում դարձավ, եւ հաջորդ երկու տարիները ես անցկացրի բազմաթիվ գրադարաններում, արխիվներում, մասնավոր հավաքածուներում: Ես հանդիպեցի հարյուրավոր հետաքրքրական մարդկանց ամբողջ աշխարհում, որոնք ինչ-որ կերպ կապված էին այս թեմայի հետ: Հանդիպեցի պրոֆեսոր Արմեն Բայբուրթյանին, որն այժմ Լոս Անջելեսում Հայաստանի գլխավոր հյուպատոսն է, պրոֆեսոր Ինա Մաքքեյբին եւ Էդմունդ Հերցիգին, երկուսն էլ Նոր Ջուղայի առեւտրային ցանցի եւ Նոր Ջուղայի հայոց բարբառի մասնագետներ: Ես ճաշեցի լեգենդար պրոֆեսոր Ալեքսանդր Վանգ Ճի Չենգի հետ, որն իր ամբողջ կյանքն անց է կացրել Հյուսիսային եւ Կենտրոնական Չինաստանում ռուս եւ հայ ներգաղթյալների կյանքն ուսումնասիրելով: Ավելի ուշ ծանոթացա երկու հիանալի տիկնանց հետ՝ Լիզ Չաթըրի, որը հայտնի Փոլ Չաթըրի հեռավոր ազգականն է, եւ Նադյա Ռայթի, որը Սինգապուրի եւ Մալայզիայի հայերի մասին մի գիտական հատորի հեղինակ է: Այս բոլոր հանդիպումների նպատակը հիմնականում այդ մարդկանց փորձը կլանելն էր, քանի որ, ինչպես նկատեցի, շատ մասնագետներ նախընտրում են աշխատել միմյանցից առանձին: Բայց վերջնական արդյունք հնարավոր եղավ ստանալ միայն ամեն ինչ իրար կապելու շնորհիվ: Սա շատ հետաքրքրական ժամանակահատված էր՝ նյութեր, գրքեր, քարտեզներ, պատկերներ հավաքելու համար: Վերջին ինը տարիների ընթացքում ես հավաքել եմ երեք միլիոն թվային եւ ֆիզիկական տվյալներ Հայաստանի պատմության վերաբերյալ Չինաստանում, Հնդկաստանում եւ Հարավ-Արեւելյան Ասիայում: Միայն «Անդին» ֆիլմի լուսանկարների արխիվը պարունակում է շուրջ 60 հազար լուսանկար, որոնք 2014 թվականից մինչ այժմ չեմ հասցրել դիտել եւ մշակել:

Բուն «արկածախնդրությունը», անշուշտ, սկսվեց, երբ սկսեցի նկարահանումները 2012-ի սկզբին: Երեք տարի ես եւ իմ նկարահանող խումբը այցելեցինք 11 տարբեր երկիր, այդ թվում՝ Հնդկաստան, Տիբեթ, Չինաստան, Հայաստան, Մեքսիկա, Ղրղզստան, Ռուսաստան, Ֆրանսիա: Դա եւս մեկ իսկայական քայլ էր այս ծրագրի իրականացման մեջ: Ես շատ հպարտ եմ, որ մենք կարողացանք ֆիլմն ավարտել որոշ ակադեմիական հրատարակություններով եւ արժեքավոր գտածոներով, ինչպիսիք են 1323 թվականով թվագրված հայատառ մի տապանաքար: Ի վերջո, «Անդին» վավերագրության կինոտարբերակը ցուցադրվեց տարբեր երկրներում, բայց սերիալը երբեք չի թողարկվել: Եվ նյութերի մեծ մասը երբեւէ չի ցուցադրվել:

**-Կատարածդ վիթխարի հետազոտական աշխատանքը քեզ այս ոլորտի մասնագետ դարձրեց: Շարունակելո՞ւ ես թեման:**

-Պիտի խոստովանեմ, որ կինոռեժիսոր լինելն իմ միակ ցանկությունը չի եղել: Վաղ մանկությունից կիրք եմ ունեցել ոչ միայն կինո ստեղծելու, այլեւ հնագիտության ու պատմության հանդեպ: Երբեմն մարդիկ չեն հասկանում, թե ինչպես կարող եմ միաժամանակ լինել խաղարկային կինոյի բեմադրիչ, շոումեն եւ մասնագետ պատմաբան: Բայց կյանքիս ընթացքում տարբերակները բաց եմ պահում, եւ այստեղ ես իսկապես որեւէ հակասություն չեմ տեսնում: Եթե զբաղված չեմ կինոյում, նախընտրում եմ շարունակել իմ հետազոտությունները: Մշակութային փոխանակումը, Մետաքսի ճանապարհի պատմությունը, Չինաստանի վաղ քրիստոնեությունը եւ առեւտրի պատմությունը կազմում են իմ ուսումնասիրությունների հիմնական առանցքը: 2020 թվականը բավականին ծանր տարի էր կինոոլորտի համար ամբողջ աշխարհում, ուստի եւ պատրաստվում եմ հրատարակել հայ-չինական հարաբերությունների մասին իմ նոր գիրքը:

**-Դու խաղացել ես որոշ չինական ֆիլմերում: Ենթադրում եմ, որ չինախոս եվրոպացի դերասանները մեծ պահանջարկ ունեն Չինաստանում:**

-Ինչպես աշխարհի շատ կինոգործիչներ, չինական կինոն նույնպես օտարերկրացիների կարիք ունի էկրանին: Հատկապես, երբ խոսքը վերաբերում է պատմական կերպարներին, ինչպիսիք են Ռիխարդ Զորգեն, Ստալինը: Երբեմն օտարերկրացիները ստանում են երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ամերիկացի զինվորների դերեր կամ խաղում են 20-րդ դարի առաջին քառորդում Չինաստանում գտնված սպիտակգվարդիականների դերեր: Մի քանի նման դերեր եմ կատարել, մարմնավորել եմ վրացի կոմունիստ Վիսարիոն Լոմինաձեին «Քամիներն ու ամպերը 1927-ին» չինական նկարում: Դա զվարճալի էր, եւ ամենից շատ ես հասկացա, որ դերասան լինելը մի ցնցող հնարավորություն է՝ էկրանին ստեղծելու համար կերպար, մարդ՝ քո իսկ կյանքի փորձից ու ցավոտ հիշողություններից:

⇨7

# Մարդ-մեղեդին

*ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Մուսլիմ Մագոմաեւի հուշերից (1942-2008)*

**«Լիտերատուրնայա գազետա», Մոսկվա, 20.01.2021**

Մենք իրար հանդիպեցինք այնպես, ասես վաղուց էինք իրար ճանաչում: Ցույց տվեցի նրան իր «Սոֆիի» տեսագրությունը: Նա զարմացավ, թե ինչ հեշտ եւ արագ հաջողվեց տիրապետել շեշտադրությանը: Ասաց. «Դժվարն սկսելն է»: Առաջին երգը, որ գրեց ինձ համար, «Սպասումն» էր Հարոլդ Ռեգիստանի բանաստեղծության հիման վրա: Առնոն գիտեր նեապոլիտանական երգի հանդեպ իմ կրքի մասին, այնպես որ երգը ստացվել էր հենց այդ եղանակային ոճով, բայց Արեւելքի բույրով: Ես այն երգում էի ե՛ւ Առնոյի դաշնամուրի նվագի ներքո, ե՛ւ էստրադային, ե՛ւ սիմֆոնիկ նվագախմբերի հետ: Այն մտավ իմ լավագույն սկավառակների մեջ: Միգուցե «Սպասումը» հիթ չէր, բայց հենց այդ երգը դարձավ իմ եւ Առնոյի համատեղ այցեքարտը:

Այնուհետեւ նրա հետ «զարկ տվեցինք» թվիսթներին ու շեյքերին ի՞նչ արած, երգերը նույնպես իրենց նորաձեւությունն ունեն: Մեր երկրում առաջին թվիսթը Յուրի Սաուլսկիի եւ Միխայիլ Տանիչի «Սեւ կատուն» էր: Եվ պետք է նկատել, որ «գրաքննական ականջները» դժբախտ սեւ կատվի «հետապնդմամբ» տարված՝ բազում անգամներ լսեցին իմ ու Բաբաջանյանի թվիսթները:

Առնոն բացառիկ շնորհ ուներ՝ նա հաջողացնում էր, լսելով հանրահայտ թեմա եւ վերցնելով որոշ ոճային տարրեր, ձուլել սեփական մեղեդիի ոսկուն: Այսպես, «լսողությունը լարելով» Ադրիանո Չելենտանոյի «Քսանչորս հազար համբույր» թվիսթին, գրեց իր «Երկրի լավագույն քաղաքը» թվիսթը: Երգի ստեղծման պահին Առնոյի համար կարեւորը երաժշտությունն էր, ո՛չ բառերը: Երբ նա գրում էր «Գեղեցկության թագուհին», ասում էր. «Ուզում եմ մի տեսակ... բուրավետ երգ...»: Նա ուզում էր, որ երգը լիներ «Իսկ դու գնացիր, իմ Մարուսյա»-ի ոճի: Գուցե երգը այդպիսին էլ ստացվեր՝ ինչ-որ բույրիկով, եթե չլիներ Անատոլի Գորոխովի բանաստեղծությունը, որն էլ հանգեցրեց գեղեցկության թագուհուն (չնայած այն ժամանակ դեռ ոչ մի թագուհի չունեինք) ու ամառվան, որը թափառում է նրբանցքներում:

Թերությունները մեր արժանիքների շարունակությունն են: Առնոյի խառնվածքը՝ նրա ինքնաարտահայտման շտապողականությունը, սահմանակցում էր այն բանի հետ, որը կարելի է անվանել ստեղծագործական ագահություն: Եվ դրա հետ մեկտեղ նա ասես կողոպտում էր ինքն իրեն՝ կանխելով իրադարձությունները: Դրա համար նա «խորտակեց» իր հազիվ ծնված բազում լավ գործերը, որոնք մնում էին հանրահայտության շեմից այն կողմ:



Նիկոլայ Դոբրոնրավովի հետ գրեց «Հպարտություն» երգը («Եկավ տխուր երգի վերջը»): Շատ գեղեցիկ ստացվեց, այն կարող էր հիթ դառնալ, միայն ժամանակ էր հարկավոր, որպեսզի, ինչպես հիմա են ասում, «շրջանառության մեջ դրվեր»: Ես այդ երգը մի քանի անգամ երգեցի, եւ այդտեղ Բաբաջանյանը, որը, ինչպես միշտ, շտապում էր, «խեղդեց» այն՝ թողարկելով հերթական հիանալի երգը՝ «Շնորհակալ եմ քեզ»: Այն գերհանրաճանաչ դարձավ, եւ այնպես ստացվեց, որ մի հիթը սպանեց մյուս՝ պոտենցիալ հիթին: Այդպիսի ճակատագիր ունեցավ նաեւ «Անսպասելի ժամին» սքանչելի երգը («Ինչ երկար էինք գալիս դեպի իրար»). դրան «ոտք գցեց» «Մի՛ շտապիր» երգը: Նույնիսկ «Սասնայի անիվին» Առնոն թույլ չտվեց ամբողջությամբ շրջանառության մեջ մտնել, չսպասեց մինչեւ այն հասնի իր հռչակավորության գագաթնակետին ու անմիջապես «հանձնեց» «Հարսանիքը»:

Բաբաջանյանի անհամբեր տաղանդը ասես ինքն իրեն կրնկակոխ հետապնդելիս լիներ: Մեղեդիները «սեղմում» էին նրան՝ ծնվելով մեկը մյուսի հետեւից: Առնոն ինձ էր նայում իր՝ ասես տանիք կապած հոնքերի տակից ու դեռահասահանճարի պարզամտությամբ բացատրում էր

-Հասկանո՞ւմ ես, ծերուկ, բռնեցի, ուրիշ մեղեդի գրեցի: Ու այն ավելի լավն է: Իսկապես ավելի լավն է...

Ամեն անգամ նա համարում էր, որ հենց իր նոր ստեղծագործությունն է, որ կա իր անմահ մեղեդին: Իսկ հին մեղեդին, որը չէր էլ հասցնում երիտասարդ լինել, աչքաթող էր անում: Իհարկե, այդ ամենը նրա մեղքը չէր, այլ ավելի շատ փորձանք էր, որը կապված էր մեր այն ժամանակվա թեթեւ երաժշտության բնագավառում պրոդյուսերների դպրոցի բացակայության հետ: Արեւմուտքում դա վաղուց ամբողջ ուժով ծաղկում էր, իսկ մեզ մոտ նոր պատրաստվում էր ծլել...

Ինձ համար հիմա դժվար է ասել, թե ինչու Բաբաջանյանի ստեղծագործական կարիերան դասավորվեց այս եւ ոչ այլ կերպ: Զանգվածային ունկնդրին նա հայտնի է որպես փայլուն երգահան, լուրջ երաժշտության գիտակներին՝ որպես ակադեմիական ստեղծագործությունների հեղինակ: Ես միշտ զգում էի, որ նա ուզում է լուրջ երաժշտություն գրել, որը նա գրում էր հնարավորության սահմաններում:

Եվ, այնուամենայնիվ, նրա հոգին ծաղկում էր մեղեդիի մեջ: Երբեմն մարդու մասին ասում են, որ նա մարդ-նվագախումբ է: Բաբաջանյանի մասին կարելի է ասել, որ նա մարդ-մեղեդի էր: Նրա երգերը վառ արտահայտված մեղեդային բնույթ ունեն: Նրա մեղեդիները պարզապես գեղեցիկ չեն, դրանք զգայական են: Դրանց զվարթությունը խանդավառող է, իսկ տխրությունը՝ խոցող: Հնարավոր է, որ հենց երգերն էլ շեղեցին նրան «ճշմարիտ» ուղուց՝ դառնալով նրա համար գայթակղություն: Սակայն երգերի մեջ էլ նա մնում է մասշտաբային կոմպոզիտոր: Երբ նա դրանք կատարում էր դաշնամուրով, նրա ձեռքերի տակ մի ամբողջ նվագախումբ էր հնչում: Իսկ նրա երգերը նվագախմբի կատարմամբ լսելով՝ ինքս ինձ ասում էի. «Առնո, դրանք դաշնամուրով ավելի հյութեղ ու հաստատուն են»:

**Ռուսերենից թարգմանեց**
**ԳԵՎՈՐԳ ԱՄԱՏՐՅԱՆԸ**

# Ռուբեն Գինի.
# Հայկական փնտրտուքները Չինաստանում

⇨6 Բայց ամենից առաջ, որպես ռեժիսոր, ես իմացա, թե որքան կարեւոր է դերասաններին նկարահանման հրապարակում ավելի շատ ազատություն տալ: Դրանից առաջ ես բռնակալ ռեժիսոր էի, հիմա ավելի լսող տեսակի եմ:

**-Լինելով գրողների ընտանիքից՝ հայտնի հայ արձակագիր Ռուբեն Հովսեփյանի թոռը եւ «Նորք» գրական ամսագրի գլխավոր խմբագիր Լիլիթ Հովսեփյանի որդին, զարմանալի չէ, որ դու նույնպես գրում ես, թեեւ՝ ռուսերեն, գործերդ էլ թարգմանվել են հայերեն, չինարեն ու անգլերեն: Ի՞նչն է հուզում գրող Ռուբեն Գինիին:**

-Ժամանա՛կը: Ժամանակն ինքնին: Անհատի, մարդու էվոլյուցիան՝ մանկությունից մինչեւ ծերություն: Ենթադրում եմ, որ ժամանակը յուրաքանչյուր վայրկյան հրեշավոր ազդեցություն է թողնում մեզ վրա: Միեւնույն ժամանակ՝ երբեք չենք կարող որսալ պահը: Մեկ վայրկյանը կարող է կործանարար լինել, հինգ րոպեն կարող է ստեղծել մի հիանալի գաղափար, որը կարող է փոխել աշխարհը կամ կարող է ավելի լավը դարձնել աշխարհը կամ ոչնչացնել ամբողջ քաղաքը: Հիշում եմ այն մարդու կերպարը, որը բառացիորեն մեկ վայրկյանում բնաջնջվեց Հիրոշիմայում, երբ ատոմային ռումբն ընկավ քաղաքի վրա: Մարդն անհետացավ, գետնին մնաց միայն անորոշ ստվեր: Դա այն հազվագյուտ պահն է, երբ կարող ես «բռնել» ժամանակը, տեսնել դրա կործանարար ուժը: Մեզնից շատերը խուսափում են մտածել այս կործանարար ուժի մասին: Այն գտնվում է մեր հոգում, գուցե քնելուց առաջ, երբ մութ սենյակում մեր գլուխը դնում ենք բարձին կամ այն պահին, երբ հարազատ մեկն է անսպասելի մահանում: Եվ մեզանից յուրաքանչյուրն ի վերջո գիտակցում է, որ դրանից երբեք չի խուսափի: Այս գիտակցումը ես ունեցել եմ արդեն մանկության տարիներին, որը թույլ է տվել ինձ բոլորովին այլ կերպ ընկալել աշխարհը եւ իմ աշխատանքը: Ես խորապես մտահոգված եմ ժամանակի խնդրով, գուցե այդ զգացմունքները համահունչ են կինոյի եւ պատմության իմ ընկալումներին: Գոնե մի փոքր ավելի երկար «բռնել» պատմությունը՝ փորձելով լուսանկարել խցիկի միջոցով: Ինձ համար թե՛ տեսախցիկը, թե՛ գրողի գրիչը պատմություն ստեղծելու համար են, ոչ ավելին: Տարբեր գործիքներ՝ մեկ նպատակով. փորձ՝ մուտք գործելու հանդիսատեսի կամ ընթերցողի սիրտը: Ստիպե՛ք նրան լսել ձեզ, վստահել ձեզ եւ հետեւել ձեզ: Եվ երբեք մի՛ հուսահատեցրեք նրան:

**-Դու շատ ակտիվ էիր Հայաստանի վերջին պատերազմի ժամանակ օգնություն կազմակերպելու գործում...**

-Պատերազմի անսպասելի բռնկումից հետո Չինաստանում բնակվող բոլոր հայերը ցանկություն հայտնեցին օգնել: Որպես Չինաստանի հայ համայնքի «Չայնահայ» միության խորհրդի անդամ՝ ես եւ իմ գործընկերներն անմիջապես գործի անցանք: Մեկ օրվա ընթացքում համայնքի խորհուրդը կազմակերպեց դրամահավաք «Հայաստան» համահայկական հիմնադրամին ուղարկելու համար: Գիտակցելով, որ մենք ապրում ենք աշխարհի ամենաարդյունավետ երկրներից մեկում, մենք սկսեցինք առաջին անհրաժեշտության իրեր հավաքել ռազմաճակատի եւ բանակի համար: Առաջին երկու բեռները միանգամից ուղարկվեցին: Չինաստանում յուրաքանչյուր հայ եւ մեր չինացի հարազատներն ու ընկերները խորապես մտահոգված են այն ամենով, ինչ այժմ կատարվում է Արցախում եւ Հայաստանում: Մենք բոլորս միասին ենք:

**-Քո անհանգիստ բնությունը պետք է որ քեզ մղի դեպի այլ գործեր:**

-Կան որոշ բաներ, որոնք ինձ միշտ հետաքրքրել են, օրինակ՝ սնկաբանությունը: Տարիներ շարունակ ես իմ սենյակներից մեկը վերածել էի տնային լաբորատորիայի, եւ ժամանակ առ ժամանակ շարունակում եմ հետազոտություններ այդ ոլորտում՝ համագործակցելով միջազգային կազմակերպությունների հետ: Սնկերը եզակի օրգանիզմ են մեր մոլորակի վրա, հատկապես բորբոսասունկը, որը քիչ է ուսումնասիրվել անգամ 21-րդ դարում: Այս օրգանիզմները եւ դրանց թունավոր միացությունները կարող են, օրինակ, հսկայական քանակությամբ նոր տեսակի դեղեր ապահովել: Այսպիսով, գիտական հետազոտությունների արդյունքում ձեռք բերված փորձն արտացոլվում է ստեղծագործության մեջ: Ինձ միշտ հիացրել են գիտական կրթություն ունեցող գրողներն ու կինոգործիչները, քանի որ դա աննախադեպ իրատեսություն է փոխանցում նույնիսկ ամենաֆանտաստիկ ստեղծագործություններին:

Իմ մյուս ցանկությունն է կրկին այցելել Չինաստանի արեւմուտքում գտնվող Տակլա-մական անապատի հյուսիսային մասը, որը եղել է Մետաքսի ճանապարհի երթուղիներից մեկը: Ութ տարի առաջ վավերագրական ֆիլմ նկարահանելիս ես եւ իմ անձնակազմը արդեն անցել ենք այդ երթուղով՝ Սյիանից, Դյունհուանգով, Ակսուից դեպի Ուրումչի: Բայց մենք շտապում էինք, եւ ես հիշում եմ հազարավոր լքված քարանձավներ, իսկ ավազի տակ գծագրվում էին միջնադարյան քաղաքները: Այդ խորհրդավոր երկիրն ինձ հուշում է, որ մի օր ես անպայման վերադառնալու եմ այնտեղ մի նոր արշավախմբով...

ՏԻԳՐԱՆ ԵԿԱՎՅԱՆ

# Գաբրիել Դեվեջյան, պապի հետքերով

*Հայկական ծագում ունեցող հազարավոր ֆրանսիացի երիտասարդներ համախմբվեցին Արցախի պաշտպանության շուրջ, ինչի մասին է վկայում, օրինակ, Հայ դատի պաշտպանության կոմիտեի եւ ՀՅԴ Նոր Սերունդի շարքերի համալրումը նորանոր անդամներով: Քանի որ դժվար է սոցիալական ցանցերում եւ իրականում հաշվարկել յուրաքանչյուր գործողություն, ուստի մենք կանգ կառնենք խոստումնալից ապագա ունեցող Քաղաքական հետազոտությունների ինստիտուտի մի երիտասարդ ուսանողի դիմանկարի վրա:*



**Ֆրանս Արմենի - Գաբրիել Դեւեջյա՛ն, դուք Պատրիկ Դեւեջյանի թոռն եք, որի հետ բազմիցս եղել եք Հայաստանում: Կարո՞ղ եք ասել, թե ի՞նչն է ամենաթանկ բանը, որ ձեր պապը փոխանցել է ձեզ, եւ ի՞նչ է ձեզ համար հայկական ինքնությունը:**

**Գաբրիել Դեւեջյան-** Առաջին անգամ պապիս հետ Հայաստանում եղա, երբ տասնչորս տարեկան էի: Այդ ժամանակ ես ու զարմիկս Հայաստանի մասին գիտեինք միայն այն, ինչ որ նա պատմել էր մեզ, եւ մենք անպայման ուզում էինք ճանաչել այն: Հիշում եմ, որ գնացինք Թուրքիայի սահմանի մոտ, եւ բլրի գագաթից կարող էինք տեսնել Անին: Ես ասացի նրան. «Ի՜նչ ցավալի է, մենք երբեք չենք տեսնի այդ եկեղեցիները, դղյակներն ու աշտարակները»: Նա թոթվեց ուսերն ու պատասխանեց. Մենք ավելի քան հինգ հազար տարեկան ենք, դու ինչ է՝ իրո՞ք կարծում ես, որ մենք երբեք այնտեղ չե՞նք գնա: Հային դռնով դուրս անես՝ պատուհանից ներս կգա»: Ահա այս հույսն է մարմնավորում ինձ համար հայ լինելը:

**-Վերջերս Քաղաքական հետազոտությունների ինստիտուտում, որի երրորդ կուրսի ուսանող եք, ստեղծել եք հայկական ընկերություն: Ի՞նչ նպատակներ եք հետապնդում:**

-Ռոզա Շահինյանի հետ միասին ստեղծել եմ այդ ընկերությունը, որի նպատակն է Քաղաքական հետազոտությունների ինստիտուտի ուսանողներին ծանոթացնել Հայաստանը: Մենք աշխարհի հնագույն ազգերից մեկն ենք, մշակույթով՝ եվրոպական, սակայն անծանոթ ենք մնում արեւմտյան հանրությունների մի ստվար զանգվածի: Սա անուղղելի չէ: Կարծում եմ, որ Քաղաքական հետազոտությունների ինստիտուտի ուսանողները շատ բաց են այդ հանդիպումների համար եւ, ի դեպ, Արցախի հակամարտության պատմական աղբյուրների վերաբերյալ մեր առաջին գիտաժողովը մեծ հաջողություն ունեցավ: Հուսով ենք, որ դրանք կշարունակվեն, եւ պատրաստում ենք նաեւ միջոցառումներ հայ երաժշտության, գրականության ու կերպարվեստի շուրջ:

**-Ինչպե՞ս տարաք Ղարաբաղի պատերազմի այդ 43 օրերը: Ի՞նչ կարծիքի եք Սփյուռքի համախմբման եւ այն մասին, թե ինչպես ֆրանսիական հանրային կարծիքն ընկալեց այդ հակամարտությունը:**

-Ինչպես բոլոր հայերի համար, դա ահավոր ցավոտ էր: Կարծում եմ՝ Սփյուռքն արեց ինչ կարող էր: Նա նույնպես պատրաստ չէր պատերազմին. եւ ինչպե՞ս հանդիմանել նրան դրա համար: Իհարկե, հաղորդակցությունը դժվար էր, ֆրանսիացիները հաճախ այլ հետաքրքրություններ ունեն, քան փոքրիկ Հայաստանը: Հաղորդակցական դաշտն այսօր անմշակ տարածք է, որտեղ պետք է գործի համայնքը: Եթե նրանց բացատրվի, մարդիկ պատրաստ են հասկանալ, որ այն, ինչ խաղարկվում է Հայաստանում, ինչ-որ կապ ունի Եվրոպայի ճակատագրի հետ: Մեծ թվով ջիհադիստներ Արցախ ուղարկելով ու Ֆրանսիայի նկատմամբ բոյկոտ հրահրելով՝ Էրդողանը մեծ «գնահատանքի» հավաստիացումներ արեց մեզ: Սակայն դա բավարար չէ, այժմ Հայաստանը պետք է այնպես անի, որ Եվրոպան լսի իրեն, եւ որպեսզի այլեւս նման ողբերգություն չլինի, նա պետք է վերանայի իր դիվանագիտական ռազմավարությունը: Ես համոզված եմ, որ մոտ ենք դրան:

**-Ի՞նչ կարծիքի եք Ֆրանսիայի հայկական համայնքի ապագայի մասին:**

-Կարծում եմ, որ Ֆրանսիայի հայկական համայնքում կան շատ բարձրարժեք մարդիկ, որոնց ներգրավվածությունն անսահման է: Դեռ Միսաք Մանուշյանից սկսած, հայերի նվիրվածությունը Ֆրանսիային կասկածից վեր է: Լուի Արագոնն իր «Կարմիր ազդագիրը» բանաստեղծության մեջ, որ լավագույնս նկարագրում է այդ հայ-ֆրանսիական ոգին, ասված է. «...երջանիկ ապրես Երեւանում» եւ «...Ֆրանսիա կոչելով՝ կռվեցին ու ընկան»: Ես վստահում եմ, որ իմ սերունդը կշարունակի գործը: Արցախի պատերազմի շուրջ ես հանդիպեցի իմ տարեկից ծագումով հայ շատ ֆրանսիացիների, որոնք հպարտ ու բարձր են պահում իրենց ծագումն ու եվրոպական արժեքները: Նախորդ սերունդները կարողացան պահպանել իրենց հիշողությունն ու ինքնությունը՝ միեւնույն ժամանակ օրինակելու արժանի ինտեգրացիա հաջողելով: Ես կարծում եմ, որ ի՛մ սերունդը պատրաստ է շարունակել այդ գործը՝ ճանաչել տալով հայ մշակույթը Եղեռնից անդին՝ չմոռանալով նրա պատմությունը: Մենք այլեւս չպիտի ցավով վերապրող ժողովուրդ խորհրդանշենք, այլ հակառակը՝ մի աշխույժ ու դինամիկ ուժ:

France Arménie-ից թարգմանեց
ԱՐՈՒՍՅԱԿ ԳՐԻՆՈ ԲԱԽՉԻՆՅԱՆԸ
Միստերոն, Ֆրանսիա

Ի ՀՈՒՇ




Հունվարի 21-ին, Ֆլորիդայում, 83 տարեկանում վախճանվել է ամերիկյան երաժշտական թատրոնի լեգենդար դեմքերից մեկը՝ պարաստեղծ, բեմադրիչ եւ արտադրիչ **Բոբ Ավյանը**, որը մասնակցել է անցած 60 տարիների ընթացքում Բրոդվեյի մեծագույն երաժշտական բեմադրություններից շատերի ստեղծմանը:

Նա ծնյալ Ռոբերտ Ավետիսյան էր: Ծնողները՝ Ջոն Համփարը (Հովհաննես Համբարյան) եւ Էսթեր Քելեշյան-Ավետիսյանը, Ցեղասպանության հետեւանքով հաստատվել էին նախ Լիբանանում, ապա տարագրվել ԱՄՆ: Նրանց երեք զավակները մեծացել են Մանհաթընի (Նյու Յորք) բազմամշակույթ եւ արվեստառատ մթնոլորտում: Ութ տարեկան է եղել Բոբը, երբ քույրը՝ Լորան (հետագայում՝ տիկին Նաբեդյան), նրան տարել է Ռուբեն Մամուլյանի «Օքլահո՜մա» ներկայացմանը, որից հետո տղան անվերադարձ «հիվանդացել է» թատրոնի, մյուզիքլի եւ պարարվեստի սիրով: Հաճախել է դաշնամուրի, շեփորի եւ լարային գործիքների դասերի, սակայն՝ ոչ պարի: Ինչպես հետագայում գրել է իր «Պարող մարդը. Բրոդվեյի պարաստեղծի ուղեւորությունը» ինքնակենսագրության մեջ, «Տղաները չպիտի պարեին, հատկապես հայ մշակույթում, բայց ես սիրում էի երաժշտությունը ու հատկապես այն ազատությունը, որը գտնում էի պարի մեջ»:

1954-1959 թթ. Ռոբերտ Ավետիսյանն ուսանել է Բոսթոնի համալսարանում, միաժամանակ շարժումների դասեր առել տեղի բալետի դպրոցում: 1959-1968 թթ. որպես պարող աշխատել է Բրոդվեյի տարբեր թատրոններում, կատարել Ինդիոյի դերը «Վեսթսայդյան պատմության» առաջին բեմադրության մեջ (1960), որին հետեւել են դերեր «Ծիծաղելի աղջիկը» (Բարբրա Ստրեյզանդի խաղարկությամբ), «Ուրճարան «Քրոուն», «Հենրի, քաղցր Հենրի» եւ այլ ներկայացումներում: 1967-ին Նյու Յորքում պարող, պարադիր Մայքլ Բենեթի հետ Ավյանը հիմնել են «Մայքլ Բենեթ փրոդաքշընզ» շոու-բիզնեսի ընկերությունը: Ավյանն իրականացրել է պարային ձեւավորումներ բրոդվեյյան մի շարք ներկայացումներում՝ «Կոկո» (մեծանուն Քեթրին Հեփբըրնի դերակատարմամբ), «Խենթություններ», «Ճոճանակ», «Պարասրահ», բեմադրել «Միսս Սայգոն», «Մարթին Գեր» եւ այլ երաժշտախաղեր: Արժանացել է «Անթուանեթ Փերի», «Դրամա դեսք» «Լորենս Օլիվյե» եւ այլ մրցանակների (երբեմն՝ Բենեթի հետ միասին): 1975-ին, Բրոդվեյում Ավյանը եւ Բենեթը ներկայացրել են իրենց կյանքի գլխավոր աշխարհահռչակ «Կորդեբալետ» մյուզիքլը: Սյուժեի հիմքում 17 երիտասարդ պարողների ճակատագիրն է, որոնք հույս ունեն դեր ստանալ մյուզիքլում ու կարիերա սկսել Բրոդվեյում: Միանգամայն նորություն էր մյուզիքլի միջոցով անդրադարձը հանրության կարծրատիպերին, հոմոֆոբիային, տարիքային նախապաշարմունքներին, ռասիզմին: Աննախադեպ էր նաեւ փորձերի միջոցով սյուժեի զարգացումը երաժշտաթատրոնի բնագավառում: 1976-1990 թթ. «Կորդեբալետն» անընդմեջ ներկայացվել է Բրոդվեյի «Շուբերտ» թատրոնում՝ սահմանելով բեմական կյանքի երկարակեցության մրցանիշ: Ներկայացումն արժանացել է ութ «Թոնի» եւ Փուլիցերյան մրցանակների: Մյուզիքլի հիման վրա 1985-ին նկարահանվել է համանուն կինոնկար՝ Ռիչարդ Աթենբորոյի բեմադրությամբ: 2006-ին ներկայացումը վերստին սկսել է ցուցադրվել Բրոդվեյում, Ավյանն այս անգամ հանդես է եկել որպես բեմադրիչ: Ավյանն է արտադրել նաեւ «Երազանքի աղջիկները» մյուզիքլը (1981)՝ առաջին մյուզիքլն ամբողջովին սեւամորթ արտիստների խաղարկությամբ, որ շահել է վեց «Թոմի» եւ երկու «Գրեմի» մրցանակ:

1987-ին Մայքլ Բենեթի անժամանակ մահից հետո Բոբ Ավյանը որոշ ժամանակ աշխատել է Լոնդոնում, պարային բեմադրություններով համագործակցել մյուզիքլի հսկաների հետ, ինչպիսիք են երգահան Էնդրյու Լլոյդ Վեբերը («Սանսեթ բուլվար») եւ իմպրեսարիո Քամերոն Մաքինթոշը («Միսս Սայգոն», «Ի մի բերելով». գլխավոր դերակատար՝ Ջուլի Էնդրյուս):

«Ես ծնվել եմ պարելու շնորհքով, որն իմ ողջ կյանքը դյութիչ է դարձրել: Այն իմ կյանքում ամեն դուռ բաց է արել: Բարեբախտաբար, խելքս բավականացրել է՝ հետեւելու համար կոչմանս: Ես շատ, շատ բախտավոր եմ»,- մի առիթով ասել է Բոբ Ավյանը:

Ա. Բ.

## Լույս է տեսել



Լույս է տեսել բանասիրական գիտությունների թեկնածու **Զուխրա Երվանդյանի** նոր հետազոտությունը՝ «**Գրիգոր Գուրզադյանի խոհերի ու մտորումների աշխարհը**»:

Հետազոտությունը, 440 էջ, նվիրված է մեծանուն աստղաֆիզիկոս, էսսեիստ, գեղանկարիչ Գրիգոր Գուրզադյանի էսսեներում խոհական եւ պատկերային համակարգերի վերլուծությանը, գեղարվեստական արժանիքներին: Ներկայացված եւ վերլուծված են գիտնականի խոհերը, մոտեցումները, եզրահանգումները հայկական եւ համաշխարհային մշակույթի գործերի, անվանի մտածողների վերաբերյալ:

Գրքի կարեւոր մասն է կազմում, 23 էջ, հեղինակի կողմից Գուրզադյանի էսսեներից ընտրված խտամտքերի տրցակը:

Գրքի խմբագիրն է՝ բանասիրական գիտությունների դոկտոր **Վարդան Հակոբյանը:** Հրատարակվել է բարերարներ **Հովիկ Աբրահամյանի** եւ **Արսեն Բալասանյանի** հովանավորությամբ:

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# Լատվիացի Խորենի վերագտած նախնյաց հայրենիքը







Լատվիայում ծնված Խորեն Ստալբեն մանուկ հասակից գիտեր, որ իր երակներում հայկական արյուն է հոսում: Տեղյակ էր, որ իր հայրը հայ նշանավոր դերասան է, սակայն 48 երկար տարիներ անցան, մինչեւ որ զգաց՝ հասունացել է Հայաստան այցելելու պահը: Այդ այցելությունը կազմակերպելու առաջարկը լատվիական TV3 հեռուստաալիքի «Աստղերը ճանապարհորդում են» հաղորդումից էր: «Լատվիայի իմ հայ ընկերներն ասացին՝ դու պիտի մեկնես, որպեսզի հասկանաս, թե ինչու ես դու այնպիսին, ինչպիսին ես»:

Լատվուհի մոր ու հայ հոր երկարամյա ընկերությունից ծնվում է Խորենը, որին մայրը կնքում է հոր անունով: «Հայրս իմ կուռքն էր, օրինակ էր ինձ համար եւ նրան երբեք չեմ հանդիպել, բայց շատ բան գիտեի նրա մասին: Դեռ մանուկ հասակիցս մայրս շատ է պատմել հորս մասին, ու միայն դրականը՝ որքան նա լավն է, հմայիչ, տաղանդավոր՝ ինձ փոխանցելով այն սերը, որ նա կրում էր հորս հանդեպ»:

Դեռահասի հասակում Խորենը ցավ էր զգում, որ մեծանում է առանց հոր: Առաջին մարդը, որ նրան ոգեշնչեց ճանաչել իր հայկական արմատները, ռեժիսոր Մառա Կիմելեն էր, որն աշխատել էր Խորենի հոր հետ «Ձեր անունը Խորե՞ն է: Ձեր հայրը հա՞յ է: Պետք չէ ամաչել դրանից, հպարտացե՛ք դրանով»,- նրա խոսքերը մեծ ազդեցություն են թողել ուսանող Խորենի վրա: Նա բացահայտեց, որ աշխարհի մեծագույն բռնցքամարտիկներ եւ՝ Մայք Թայսոնը, Մուհամեդ Ալին եւ ուրիշներ, նույն ընդհանրությունն ունեն՝ առանց հայր են մեծացել

Հոր հետ մայրն էր հեռախոսով կապ պահում հայրը Հայաստանում ընտանիք ուներ, իսկ Խորենը չէր ուզում նրանց որեւէ կերպ անհանգստացնել՝ գերադասելով սպասել հարմար առիթի: 15 տարի առաջ ընդհանուր ծանոթները հայտնեցին հոր մահվան բոթը:

Եվ ահա 2019 թվականին Խորենը Հայաստանում է: Չնայած նա ցանկանում էր թաքցնել իր զգացումները, բայց հաղորդման ստեղծագործական խումբը նկատում է, թե որքան կարեւոր է այս այցելությունը նրա համար: Խորենը խոստովանում է, որ իսկապես անհամբերությամբ էր սպասում այն պահին, երբ ոտք կդնի Հայաստանի հողին, որը նրա երազանքն էր: Սպասումներն արդարացան «Ամեն ինչ ավելի լավ էր, քան կարող էի պատկերացնել»: Օդակայանից մայրաքաղաք տանող ճանապարհին նա կանգնեցնում է մեքենան, որպեսզի հպվի հայոց հողին, համբուրի այն:

Լինելով Ծիծեռնակաբերդում, ծանոթանալով հինավուրց եկեղեցիներին, ըմբոշխնելով Հայաստանի բնությունը, տեսարժան վայրերը եւ մարդկանց հյուրասիրությունը՝ Խորենը շտապում է իրականացնել ծրագրածը՝ հանդիպում է ազգականներին ու այցելում հոր գերեզմանին:

Քրոջ հետ հանդիպումը վերջինիս համար անակնկալ է լինում՝ չափազանց զգացմունքային եւ տպավորիչ: Խորենին շատ լավ են ընդունում նաեւ զարմիկները, որոնցից երկուսը նրա անվանակիցներն են:

Հայաստանում լինելով՝ Խորենը հասկացավ, թե ինչու է սիրում գրկախառնվել, շփվող է ու բաց. դա այդքան բնորոշ է հայերին, քանի որ նրանք ունեն ուրույն աշխարհընկալում ու շփման միջոցներ:

Խորենի երեխաներից երկուսը կրում են հայկական անուններ: Ավագը՝ դարձյալ Խորեն, հոր հետ մասնակցել է խոհարարական հաղորդմանը՝ փայլելով հայկական ուտեստների պատրաստությամբ: Չորրորդ որդին՝ Աղասին, ծնվեց արդեն Հայաստան այցելությունից հետո, նրա մայրը լատվիահայ Լուսինե Ծատուրյանն է:

Իհարկե, 2020 թ Արցախյան պատերազմի օրերին էլ Խորենը չէր կարող անտարբեր մնալ նա բաց նամակով դիմեց Լատվիայի նախագահ Էգիլս Լեւիտսին:

1971 թվականին ծնված Խորենը սիրված երաժիշտ է ու դիջեյ, նրա խումբը ժամանակին նկարահանել է առաջին լատվիական տեսահոլովակը, որը ցուցադրվեց MTV ալիքով: 1995 թ նրա խումբը հաղթեց «Լիեպայայի սաթ» երաժշտական մրցույթում: Խորենը մասնակցել է նաեւ «Eurosong 2002» մրցույթին, հետագայում 4 տարի ղեկավարել է «Բալթիկա» դայվինգ-ակումբը (Եգիպտոս): 2014 թվականից Խորենը «Riga Reggae» խմբի ղեկավարն է: Խորենի կարծիքով՝ իրեն այդքան սրտամոտ ռեգգի երաժշտությունը կատարելապես համապատասխանում է իր հայկական խառնվածքին:

Լուսանկարները՝ starstravel.net կայքից

Ի ՀՈՒՇ

## Նժդեհ Բահրամյան (1946-2021)



Սան Խոսեում (Կալիֆոռնիա) մահացել է իրանական բալետի երբեմնի մենակատար **Նժդեհ Բահրամյանը**:

Բնիկ պարսկահայ՝ նա ծնվել էր 1946-ի, հոկտեմբերին: Ուսանել է Լոնդոնի Թագավորական բալետի դպրոցում: Վերադառնալով Թեհրան՝ 1960-ականներից մինչեւ 1979-ը հանդես է եկել «Իրանական ազգային բալետում», կատարել գլխավոր դերեր մի շարք բեմադրություններում: 1958-ին հիմնված «Իրանական ազգային բալետ» խումբը մինչեւ իսլամական հեղափոխությունը (1978) ներկայացումներով հանդես է եկել Թեհրանի «Ռուդաքի» համերգասրահում: Բալետի խմբում այդ քսան տարիների ընթացքում աշխատել է մոտ 50 պարող, որոնց մեկ երրորդը եղել են իրանցիներ, մնացածը՝ հրավիրյալ արտիստներ Եվրոպայից եւ ԱՄՆ-ից: Պարողների մեջ բավական թիվ են կազմել իրանահայերը, որոնց թվում էին առանջատար պարողներ Լեւոն Նշանյանը, Երջանիկ Ջամբազյանը եւ Մերի Ափիքը (Մելիք-Ազարյան), ինչպես նաեւ Էվելին Բալասանյանը, Օֆելյա Ազարնիան, Նժդեհ Բահրամյանը եւ այլք:

1979-ից հետո հաստատվելով ԱՄՆ-ում՝ Բահարմյանը շարունակել է գործունեությունը պարի բնագավառում: Կինը՝ անգլուհի Ջորջինա Բահրամյան Քոլմանը, նույնպես եղել է իրանական բալետի խմբի մենակատարուհի:

Ա. Բ.

## Հայ թատերագրություն՝ Փավստոս Բուզանդից մինչեւ Կարինե Խոդիկյան




Ամերիկյան «C.A.P.S. Publications» հրատարակչությունը վերջերս լույս է ընծայել «Հայ թատերագիրներ» ժողովածուի առաջին հատորը՝ **Արամազդ Ստեփանյանի** աշխատասիրությամբ: Այն ընդգրկում է չորս հայկական պիես եւ մեկ պատմական դրվագի թատերականացում անգլերեն թարգմանությամբ կամ հարմարեցմամբ: Հեղինակներն ընտրված են՝ հաշվի առնելով տարբեր ժամանակաշրջանները ու բնակության վայրերը. ըստ այդմ ժողովածուում ներկայացված են ինչպես 19-րդ դարի հայ դասական գրողի ստեղծագործություն (Հակոբ Պարոնյանի «Պաղտասար աղբարը»), այնպես էլ խորհրդահայ դրամատուրգիա (Սաղաթել Հարությունյանի «Եթե քո աչքը պարզ է»), սփյուռքահայ (Վահե Պերպերյանի «Վարդագույն փիղը») եւ ժամանակակից հայաստանյան թատերագրություն (Կարինե Խոդիկյանի «Չկրակեք, ես արդեն սպանված եմ»): Իսկ հինգերորդ դարի պատմիչ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» մեջ հիշվող Արշակ Երկրորդի եւ պարսից արքա Շապուհ Բ-ի հանդիպման պատմության հիման վրա գրվել է «Արշակ եւ Շապուհ» հակիրճ թատերականացված ստեղծագործություն:

Արամազդ Ստեփանյանը (ծնված 1951 թվականին, Աբադանում, Իրան) դերասան է, արտադրիչ, բեմադրիչ եւ թատերագիր: Նա Լոս Անջելեսի «Լունա փլեյհաուզ» թատրոնի սեփականատերն է եւ գեղարվեստական ղեկավարն ու արտադրիչը: Նկարահանվել է 16 կինոնկարում եւ հեռուստաշարքում, այդ թվում՝ Ջանեթ Գրիլոյի «Թռչե՛լ» կինոդրաման (2011), որտեղ կատարել է պարոն Բարսեղյանի դերը:

Ա. Բ.

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ
պրոֆեսոր

# Արտագաղթի գենետիկան կործանարար է

Աշխարհի ներկայիս սարսափ թագավարակը մեծ վնասներ պատճառեց նաեւ մեզ, սակայն մյուս կողմից ներքուստ շնորհակալություն եմ հայտնում (խոնարհվում եմ այդ հիվանդությունից զոհվածների, որոնց թվում էին նաեւ ինձ մտերիմ մարդիկ, հիշատակի առջեւ) այդ հիվանդությանը: Մի զարմացեք, պատմաբան եմ եւ լավ գիտեմ արտագաղթի ինչ լինելն ու անդառնալի կորուստներով ժողովրդի կորովը կոտրելու հանգամանքը: Ակնհայտ է, որ եթե այսօր գահավարակի հարուցած դժվարությունները չլինեին, երկիրը դատարկվելու էր: Գիտեք ինչու, որովհետեւ մեզանում արտագաղթի գենետիկ կոդը խորը արմատներ է ձգել: Օրինակներ շատ կան: Այսպես, հինգերորդ դարի կեսին, Ավարայրից առաջ, առերես հավատափոխված եւ Հայաստան վերադարձած սպարապետ Վարդան Մամիկոնյանն աշխարհիկ եւ հոգեւոր դասի ներկայացուցիչներին հստակ հայտարարեց, որ նրանց չապստամբելու դեպքում կվերցնի իր ընտանիքն ու կհեռանա Հայաստանից: Բազմաթիվ այդպիսի օրինակներ կան տասնմեկերորդ եւ հետագա դարերի ընթացքում: Երբ հարեւան Բյուզանդիան իր խարդավանքներով հայ էլիտային դուրս բերեց երկրից: Իսկ վերջիններս հեռանում էին, որովհետեւ չէին ուզում պայքարել, վախենում էին պարտվելուց, իսկ ամենակարեւորը՝ գործում էր արտագաղթի գենետիկան:

Մեզանում դասագրքային ճշմարտություն է Կիլիկիայի հայկական պետականության մեծարումն ու փառաբանումը: Սակայն ոչ մեկը չի ցանկանում կամ վախենում է խոստովանել, որ այն եւս արտագաղթի, հզոր ու մեծաքանակ արտագաղթի արդյունք էր, ու չնայած պետական, մշակութային եւ այլ ասպարեզներում արձանագրած դրա ձեռքբերումներին, մեծապես թուլացրեց ու ամայացրեց իրական Հայաստանը: Կարծում եմ, որ Հայոց ցեղասպանության ու հայրենազրկման (տվյալ դեպքում՝ կամովին) սկիզբն հենց այդ պահին եղավ եւ ավել կամ պակաս չափերով շարունակվեց հետագա բոլոր դարերի ընթացքում:

Հիմա քսանմեկերորդ դարի քսանմեկերորդ տարում պատկերը կրկնվում է «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում: Այստեղ փետրվարի 1-ից բացված ուղեւորափոխադրումների տոմս գնած հայ քաղաքացիները նեղված, զայրացած ու հիասթափված հայտարարում են. «Հայաստանն ապրելու տեղ չի, էս երկրից պետք է հեռանալ», որ «հեռանալը միայն կփրկի սովից ու կործանումից», որ «ընտանիքս սոված ու տկլոր՝ էլ չի դիմանում, գնալն է միակ ելքը», «շռայլ խոստումներով հեղափոխություն արեցին, իսկ օգտվում են միայն իրենք», որ «մեր զավակներին զոհեցին, իսկ հիմա կարծես ոչինչ չի եղել, քեֆ են անում կամ նախընտրական քարոզարշավ, մնանք որ ի՞նչ անենք» որ... որ...

Վարդան Մամիկոնյանի հետ համեմատությունը գուցե մի քիչ կոպիտ ստացվեց, բայց ակնհայտ տեսանելի է, որ 1500 տարվա ընթացքում արտագաղթողի գենետիկ կոդը չի փոխվել: Ինչպես նախկինում, այժմ էլ մարդիկ որեւէ գնով երկրից հեռանում են հիմնականում անձնական չիրացված ծրագրերի պատճառով: Այո, հայ մարդը երբեք ընչաքաղց չի եղել, նա հեռացել ու կհեռանա գլխավորապես անարդարությունների բախվելու եւ արտագաղթի գենետիկ կոդի պատճառով: Ասվածը հաստատելու ընդամենը մեկ օրինակ բերեմ. Միայն Հյուսիսային պողոտան կառուցելու նպատակով քաղաքացիներից ապօրինաբար եւ այնքան անարդարություններ են տեղի ունեցել, որ Եվրոդատարանի վճիռներով ՀՀ բյուջեից հօգուտ տուժած քաղաքացիների կայացվել է արդեն երկու միլիոն եվրո վճարելու դատավճիռներ: ԶԼՄ-ներն ու պաշտոնական աղբյուրները տեղեկացնում են, որ էլի կան նմանատիպ բողոքներ եւ հավանաբար կլինի այդպիսի ամենաքիչը եւս երեք դատավճիռ: Մեր նման փոքր երկրի համար մասնագետ իրավաբանների կարծիքով դա պատկառելի թիվ է:

Անկեղծ ասած՝ աշխարհի շատ երկրներում եմ եղել: Պատահել է նաեւ գայթակղիչ առաջարկներ եմ ստացել, բայց երկրիցս հեռանալու մասին երբեք մտքովս չի անցել: Հիմա էլ չեմ մտածում: Էնպես չէ, որ ապահովված եմ եղել: Նույն կերպ մեծացրել-դաստիարակել եմ նաեւ երեք երեխաներիս՝ նրանց մտքով էլ նման բան չի անցել երբեւէ: Չէ, այդպես մտածողներին ու գնացողներին չեմ մեղադրում, բայց մեզ համար ամենաողբերգականն ու օրհասականն այս պահին, երբ այս ամենի հետ մեկտեղ օրավուր խորտակվում է մեր Մայր պետության՝ ՀՀ-ի ապագան, ժողովուրդն այլեւս հավաքական իմաստով չունի գերխնդիրներից կարեւորագույնը, ամուր կանգնել հայրենի հողին այն հստակ գիտակցությամբ, որ մեր հզոր ազգին բարոյապես ոչնչացրել ու պետականության կորստի եզրին է հասցրել մեր իսկ քաղաքական ղեկավարությունը, որն այսօր էլ շարունակում է ճամարտակել պայծառ ապագայի մասին, երբ օր-օրի մեր իսկ աչքերի առջեւ այն հակում է դրսեւորում վերածվելու ֆիզիկական գոյությունը քարշ տալու ելած թափառական ամբոխի:



Բոլորովին էլ պատահական չէ, որ ժողովրդին այդքան «սիրող», ժողովրդի համար «ամեն ինչ անելու» պատրաստ «ժողովրդավար» վարչախումբը մարդկանց հասցրեց այն վիճակին, երբ 21-րդ դարում հայ հասարակության լայն շրջանների կողմից վերջին մեկ տարում, առավել եւս հետպատերազմյան շրջանում ամենամեծ ու համար առաջին պահանջը դարձավ «վերջ թավիշին» թեզը: Իսկ շատերն էլ անթաքույց ասում են՝ «մեզ Ստալին է պետք», այսինքն դիկտատուրա: Մոռանալով, որ դիկտատուրան, դա մտքի խավարն է, ռեպրեսիաներ, ստի ու կեղծիքի քարոզ, ազատ կամարտահայտման որեւէ դրսեւորման ճնշում եւ անհամաչափ պատիժ: Եվ դա այն դեպքում, որ 1920-ական թվականներից սկսած մեր ժողովուրդը 70 տարի ճաշակեց դիկտատուրայի տված պտուղները, հատկապես՝ 1937-ին դրանց պիկի ժամանակ: Երբ երկրում տեղի ունեցած ռեպրեսիաներին միլիոնավոր ԽՍՀՄ քաղաքացիներ (որոնց թվում տասնյակ հազարավոր անմեղ հայեր) ենթարկվեցին դաժան պատիժների, երբ կործանվում էին անմեղ մարդիկ ու ընտանիքներ: Մի կողմից, կարելի է հասկանալ ժողովրդի ցասումը եւ վրեժի ծարավը, եւ դա բնական է, քանի որ այն մարդիկ, որոնք խոստումներ էին շռայլում հիասքանչ ապագայի մասին, ոչ միայն կործանման եզրին հասցրին երկրի տնտեսությունը, հսկայածավալ տարածքային կորուստներ տվեցին եւ հազարավոր նահատակներ, հիմա էլ փորձում են մեղքը սրա-նրա վրա բարդել, մեղավորներ փնտրել չգիտեմ որտեղերում: Իսկ այս ամենին ականատես, հեկտարներով Եռաբլուր, սեփական որդու նույնիսկ հուղարկավորություն ու շիրիմ երազող ծնողներն այլեւս ուժազուրկ, այլեւս հուսալքված եւ ամեն ինչից ու բոլորից հիասթափված միակ ելքը տեսնում են հեռանալու, դեպի անհայտը գնալու մեջ:

Եղավ մի պահ, երբ մարդիկ մտածեցին, որ հները, քրեաօլիգարխիկ համակարգի ներկայացուցիչները ներեղություն կխնդրեն ժողովրդից, կվերադարձնեն գոնե իրենց թալանածի ինչ-որ մասը պետական բյուջե եւ կլինի հանրային համերաշխություն, ժողովուրդը հանգիստ պայմաններում վերջապես կսկսի կառուցել իր երազանքների հայրենիքը: Բայց թավիշը չաշխատեց, այլ ընդհակառակը՝ կամաց-կամաց ուղի հարթեց, որ երկիրը տաներ քաոսի եւ անարխիայի: Առաջացավ մի իրավիճակ, երբ դիկտատուրան անընդունելի է, թավիշը՝ խաբեություն: Մարդիկ հոգեբանական փակուղում են հայտնվել ու ակներեւ է դարձել, որ կարեւորը ծայրահեղություններից հեռու մնալն է: Այսինքն՝ մեզ պետք է «դիկտատուրայի» եւ «թավիշի» ոսկե միջինը: Որպեսզի կարողանանք առողջ ժողովրդավար պետություն կառուցել, որպեսզի օդանավակայանում րոպե առաջ երկիրը լքելու թոհուբոհ չլինի, հարկավոր է անպայման քաղաքական գնահատական տալ անցյալին (դա պիտի դառնա քաղաքական առօրյա՝ բոլոր նոր վարչախմբերը պիտի իրենց քաղաքական գնահատականը տան նախորդի գործունեությանը), իրականացնել արմատական վերափոխումներ բացառապես բոլոր ոլորտներում, հատկապես՝ առողջացնել դատաիրավական համակարգը եւ եկեղեցական համայնքը: Քանի որ մեքենայնությունների ծովում խարխափող մեր ժողովուրդն օդի նման արդարության ու արդարադատության կարիք ունի: Հետո էլ մեր հանրությանը հացի եւ ջրի նման անհրաժեշտ է վերականգնել հավատը: Հանրային համերաշխության եւ հանրային հողին հաստատուն կանգնելու հոգեկերտվածքը առողջ պահելու գործում եկեղեցին հսկայական դերակատարություն ունի:

Մեր ժողովուրդը պիտի գիտակցի, որ աշխարհի հզորներից յուրաքանչյուրը մեզ համար իր սցենարն ունի: Դրանցից մեկը ռուսականն է: Կրեմլը Հայաստանի հետագա ընթացքի վերաբերյալ երեքն ունի՝ ա) խորացնելը քաոսային վիճակը երկրում, որպեսզի վերջնականապես խեղճացնի եւ Հայաստանը «աբխազացնի», ինչպես վարվեց Արցախի հետ: բ) Հայաստանը վերածի ռուսական նահանգի (դրա մասին են վկայում սկսված «սերտ բարեկամության» թեմաներով հավաքները) վերածումը: Այսինքն՝ դե յուրե անկախ, բայց փաստացի՝ ոչ: գ) Արեւմուտքի հետ խորհրդակցելու արդյունքում ՀՀ-ի անցումային իշխանության հետ արժանապատիվ հարաբերություններ հաստատել պայմանով, որ ապագա վարչապետը ցանկալի մարդ լինի իրենց համար: Այս դեպքում իշխանության կբերվի այնպիսի քաղաքական ուժի, որը կհենվի բազմաբեւեռ աշխարհի վրա, որպեսզի Հայաստանը կարողանա պահպանել իր ինքնիշխանությունը եւ մանեւրելու հնարավորություն ստանա:

Մեզ ձեռնտու իհարկե երրորդ տարբերակն է: Վստահ ենք նաեւ, որ այդ եւ միայն այդ դեպքում գաղթականության գենետիկան աստիճանաբար կզիջի իր դիրքերը եւ ժամանակի ընթացքում նաեւ՝ կմոռացվի: Քանի որ ողջ պատմության ընթացքում հայ ժողովուրդը գլխավորապես տուժել է իր կառավարիչների տգիտությունից, անհեռատեսությունից ու արկածախնդրությունից: Մինչդեռ ողջամտությունը երբեք նրան վնաս չի բերել: Ավելին՝ հետին պլան է մղել, շատ դեպքերում նաեւ մոռացության է տվել մեզ համար կործանարար գաղթականի հոգեբանությունը: Այսինքն՝ իրականություն կդառնա հայ ժողովրդի նվիրական երազանքը՝ խաղաղ ապրել ու արարել հայրենի երկրում եւ մոլորակի այլ մասեր մեկնել բացառապես զբոսաշրջիկի կարգավիճակում:

10.01-10.02.2021

# Պատմության մեջ առաջին անգամ ԱԹՍ-ները վճռեցին պատերազմի ելքը

⇨1 Եվրոպայի Խորհրդի արտաքին հարաբերությունների հարցերով (ECFR) լոնդոնյան գրասենյակի աշխատակից Ֆրանկեն ներկայացնում է, թե Ադրբեջանը թուրքական եւ իսրայելյան արտադրության ԱԹՍ-ների տարբեր համակարգեր էր գործի դրել, որի միջոցով հակառակորդին՝ հայկական կողմին նախ լրտեսել էր, ապա՝ նրանց դիրքերը հրետանիով խոցել, կիրառել հյուծման մարտավարություն:

Հոգեբանական ազդեցությունը չի կարելի թերագնահատել, ընդգծում է Ֆրանկեն՝ հիշատակելով այն հանգամանքը, որ մինչեւ ԱԹՍ-ների ի հայտ գալը, հայերն իրենց բնակության վայրում՝ լեռնային, անանցանելի այդ տարածաշրջանում մեծ մասամբ անվտանգ էին զգում իրենց: Նա վկայակոչում է ռազմական այլ փորձագետների, մասնագետների, որոնց գնահատմամբ էլ, սեպտեմբերի 27-ին Հայաստանի դեմ, ԼՂ-ի վրա Ադրբեջանի ռազմական՝ 6 շաբաթյա հարձակման հաջող ելքն ապահովեցին ԱԹՍ-ները՝ արձանագրելով պատմության նոր իրողություն: Ադրբեջանը շահեց նոր տարածքներ, ծանուցում է «Դոյչլանդֆունկը»:

Այն իրողությունը, որ տարիներ ի վեր հայ մասնագետները, մասնավորապես վաղամեռիկ Կարեն Վարդանյանը շեշտում էին 21-րդ դարի պատերազմում ԱԹՍ-ների գերակա նշանակությունը, դրանց արտադրության, զարգացման մասին բարձրաձայնում էին ամենուր, եւ նրանց ականջալուր չէին լինում, վկայում է մեր անլուրջ եւ տգետ վարքի մասին: Ում համար Զինվորի ու Պետության անվտանգությունն ու նրան պաշտպան լինելն անսակարկելի են, սովորում է ուրիշի սխալներից, մենք՝ մեր սխալներից էլ եզրահանգման չենք գալիս: Անփույթ ու մոռացկոտ ենք, այնինչ մեր հարեւանները հաշվարկն են անում նոր հաղթանակի: Թշնամին չի յուրացրել Սյունաց լեռները մագլցելու կերպը, բայց՝ գիտի մեր թերությունն ու թուլությունը: Ղողանջի՛ր, արթնությա՛ն զանգ:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

# Հետեւություն անելու ժամանակը

Հայաստանաբնակներս թե հայության բացարձակ մեծամասնությունն անվարան այն համոզմանն է, որ հայերս մեր առջեւ ծագող հարցերի առումով հետեւություններ անելու խնդրում յուրօրինակ ենք, որն արտահայտվում է նաեւ «հայի հետին խելքը» ինչ-որ ձեւակերպումով: Այս պայմաններում մենք նաեւ չենք զլանում արձանագրել, որ ասենք Հայաստան երկրում յուրաքանչյուր առավոտ նվազագույնը 3 մլն Նապոլեոն է արթնանում: Եվ այսուհանդերձ պատահական չէ, որ մտքեր են շրջանառվում ծագող խնդիրները ամենատարբեր միջոցներով, անգամ մշակույթով ու մեզ հատուկ ներուժով լուծելու առումներով, որոնք մի կարճ ժամանակ անց վերածվում են անկատար ցանկությունների ու հերթական հուսալքության: Առնվազն տարօրինակ է, երբ ասենք ուսյալ համարվող, կենսափորձով հարուստ մարդկանց խումբը, որին հանրային առումով կարելի է մտավորականներ համարել, մեր ներկա վիճակի հիմնախնդիր է դիտարկում երկրի անվտանգային հարցը: Կա՞ արդյոք 3 մլն հայաստանցիների թե 10-12 մլն հայերի մեջ գեթ մեկը, որ դեմ է նման մոտեցմանը. Վստահաբար պնդում եմ՝ ոչ: Եվ հարցը՝ ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով ու հնարքներով լուծել այն, հնչում է ինքնաբերաբար:

Անվտանգային հարցերը, հատկապես համերկրային առումով, ֆինանսական միջոցներ, ծախսեր են պահանջում ու պարտադրում, բնականաբար՝ զգալի: Վիճակագրությունը հաստատում է, որ ասենք ԱՄՆ-ում 1 զինվորականի հաշվով տարեկան ծախսը 300 հազար դոլար է, հրեից բանակի պարագայում՝ 250 հազար դոլար, Բելգիայում 200 հազար դոլար, Ավստրիայում 140 հազար դոլար: Եթե մենք առաջնորդվենք ամենահամեստ 50 հազար դոլար գումարով, կպահանջվի 2,5 մլրդ դոլար, գրեթե այնքան, ինչքան մեր երկրի բյուջեն է: Պարզ է չէ՞, որ ամենահամեստ ասելով ՀՀ պատվախնդիր քաղաքացիս ակնարկում եմ ազերիների ներկայիս ծախսի առնվազն կրկնակին, որը վստահ եմ կսթափեցնի նրանց, կզսպի անհագուրդ ախորժակը:

Ծագում է երկրորդ հարցը՝ որտեղից վերցնել պահանջվող այդ առաջնահերթ գումարը: Ոմանք կարող են առաջարկել համահայկական դրամահավաք անցկացնել: Ընդունենք, որ աշխարհով մեկ սփռված հայ ընտանիքների թիվը 2,5 մլն է, յուրաքանչյուրին բաժին է հասնում տարեկան 1000 դոլար: Դիտարկենք այն ձեր հարազատ-բարեկամների, ընկեր-ծանոթների առումով եւ գնահատենք այդ առաջարկի հնարավորությունը: Տողերիս հեղինակի շրջապատի առումով լավատեսություն չի նշմարվում, քանզի միայն հարցվածների կեսից էլ պակասը համաձայնության նշաններ ցուցադրեց: Հիմնական մասի մոտեցումը հետեւյալն էր.- իսկ ի՞նչ է անում Հայաստանի իշխանությունը:

Դե եկ ու ասա, որ կառավարությունը հարկային համահավասարեցում է իրականացնում, մաքսային արտոնություններ է սահմանում, պետական պաշտոնյաների թվաքանակն է ավելացնում, պարգեւավճարներ է շնորհում, անցկացվող նիստերն ու հանդիպումները ֆուրշետների է վերածում, առանց մրցույթների մեկ անձից պետական գնումներ է կազմակերպում, թիկնազոր է պահում, պետության հաշվին էլ անձնական ծախսեր հոգում... Թե՛ հավատալն է բարդ, թե՛ չհավատալը, ուստի անդրադառնամ օրերս կայացած ՀՀ կառավարության նիստի մի հարցի: Խոսքը, մեղմ ասենք, կենսական գյուղատնտեսությանն էր վերաբերում, ՀՀ վարչապետի բնորոշմամբ՝ շատ կարեւոր արդյունաբերական նյութի, կանեփի մշակություն ծավալելուն: Զգում եմ տարօրինակ վիճակում հայտնվեցիք, ուռաք, քանզի այս մշակաբույսը հիմնականում նման վիճակի է հասցնում: Հիշենք նաեւ, որ փոխվարչապետ Տ. Ավինյանն էլ նշել էր կանեփի մշակման մասին ԱՄՆ-ում, ՌԴ-ում, Չինաստանում: Ամենատարբեր միջոցներով փորձեցի որեւէ տեղեկություն ստանալ հիշյալ մշակաբույս կոչվածի մասին: ՀՀ գյուղատնտեսության զարգացման առաջիկա տարիների ու ռազմավարական ծրագրերում ոչինչ չկար, նույնը՝ ՔՊ-ի նախընտրական խոստումներում, ԱԺ-ի գյուղատնտեսության հանձնաժողովի փաստաթղթերում: Գուցե ամերիկացինե՞րն օգնեն: Բացում եմ օրերս ձեռք բերած «Համաշխարհային փաստեր. 2021» տեղեկատուն, որը տպագրվում է 1868 թվականից, ամբողջ 1007 էջ ծավալով: Գյուղատնտեսությանը 11 էջ է հատկացված, որտեղ հիշատակում կա ԱՄՆ-ում առավելագույն ծավալներով արտադրվող 13 մշակաբույսերի մասին: Cannabis կոչվողի մասին ոչ մի ակնարկ: Եվ միայն ՀՍՀ հանրագիտարանի 5-րդ հատորի կանեփ նյութից տեղեկանում ենք, որ բույսից ստացվում է թել, որից էլ պատրաստում են ճոպան, պարան, լարան, իսկ պտուղներից՝ յուղ ու տեխնիկական միջոցներ: Իսկ ո՞ւր մնաց բարձր ավելացված արժեք ստեղծելու մասին կառավարության ղեկավարների հավաստիացումը: Եթե նման ակնկալիք կա, հիշատակված 3 գերտերություններն այն իրականացնում են եգիպտացորենի մշակմամբ, հատիկ ստանալով: Ծանոթացեք վիճակագրությանը: 2000-2017 թվականներին այն ԱՄՆ-ում 252 մլն տոննայից հասել է 371 մլն տոննայի, Չինաստանում 106 մլն տոննայից 259 մլն տոննայի եւ ՌԴ-ում 1,5 մլն տոննայից 13 մլն տոննայի: Եգիպտացորենի հատիկը լիարժեք անասնակեր է հատկապես թռչնաբուծությունում. թռչնամսի արտադրությունը հիշյալ երկրներում 1 բնակչի հաշվով տարեկան կազմում է 65, 15 եւ 30 կգ, երբ ՀՀ ցուցանիշը հազիվ 4 կգ է, համեմատաբար բարձր գնով:

Երբ այս առիթով դիմեցի ոլորտի խոշոր արտադրողներից մեկին, առանց երկմտելու ասաց. հարեւան երկրներից մեկում 3 հազար հեկտար հող եմ վարձակալել, եգիպտացորենի հատիկ եմ աճեցնում, որի ՀՀ տեղափոխելը 1 տոննայի հաշվով 85 դոլար է կազմում: Ակամայից հիշեցի ամիսներ առաջ էլ վարչապետի զրույցը գյուղացիների հետ առվույտ մշակելու մասին: Ստացվում է հայոց հողը կարելի է օգտագործել անգամ բամբակ աճեցնելու համար, իսկ մարդկանց սննդակարգում առաջնահերթություն համարվող կենդանական ծագման հումքի արտադրությունը թող անորոշության տրվի. հավելյալ արժեքն ո՞րն է: Այ քեզ քմահաճույք, այ մեզ հակակառավարում, համապետական խնդրի շրջանցում, ներմուծմամբ երկիր պահելու անհասկանալի գործելաոճ... Նայենք սուպերմարկետներում մսի բաժինների ցուցափեղկերը. դրանց մեկ քառորդում տեղական արտադրանք է, երեք քառորդում՝ ներմուծված: Նույն վիճակն է հագուստի պարագայում, իսկ էլեկտրոնիկան ամբողջությամբ արտասահմանյան է:

Այսկերպ անվտանգային գերխնդրի լուծումը պատագային է թողնվում: Մինչդեռ միայն ասենք, երեք հիմնական մսատեսակների ներմուծումը կանխելու արդյունքում, դրանց արտադրությունը ՀՀ ներկայիս պահանջի մոտ 250 հազար տոննային հասցնելու պարագայում 1 մլրդ դոլարի ապրանքաշրջանառություն կունենանք ՀՆԱ-ի մեջ: Ֆինանսական միջոցների տեր դարձած ֆերմերային տնտեսություններն իրենք բազմաբնույթ աշխատանքների պատվիրատուներ կդառնան, սկսած հումքի մշակումից, շինարարությունից, գյուղական ենթակառուցվածքները բարեփոխելուց մինչեւ ժամանակակից ոլորտների ծավալումը գյուղական համայնքներում: Տեսար՝ գործընթացը լոկոմոտիվի դեր ստանձնեց, ՀՀ-ում երկնիշ տնտեսական աճ գրանցվեց, 5-6 տարում այն կազմեց 80-90 մլրդ դոլար, բյուջեն 30-35 մլրդ դոլար, որից 6-7 մլրդ դոլարը կարող ենք հատկացնել գիտությանն ու անվտանգային խնդիրներին, 1 զինվորականի հաշվով ծախսն էլ հասցնելով 200 հազար դոլարի:

Նկատեմ, որ արվածը սիրողական մոտեցում է, երբ այլ դիրքորոշում իշխանությունը չի էլ ներկայացնում: Այսպիսին է փոքր ու միջին գործարարության գյուղոլորտի պատկերը կայացած տնտեսություններ ունեցող երկրներում, որոնցից սույն գրառման սկզբում, ռազմական ծախսերի առումով հիշատակեցինք հրեից երկիրը, Բելգիան ու Ավստրիան: Գերզարգացած գյուղատնտեսություն, հումքի վերամշակում, տնտեսական շարժ հանրային առաջնահերթություններում, ֆինանսներ եւ գործելու դաշտ: Պետք չէ իմաստակ-անմեղունակի տեսքով հարցնել, թե ՀՀ-ն ունի՞ արդյոք բավարար հողա-ջրա-ջերմային կարողունակություն եւ նման անտեղյակության ցուցադրում, որոնց բազմիցս ենք անդրադարձել: Ոչ մեծ Դանիան, ուր բնակլիմայական պատճառներով եգիպտացորեն չի աճում, հենց այնպես չի 10-12 մլն տոննա հացահատիկ արտադրում, այն լիարժեք անասնակեր օգտագործելու արդյունքում կենդանիներից բարձր մթերատվություն ապահովում: Միայն խոզի մսի արտադրությունը 1,6 մլն տոննա է կազմում, երկրի ՀՆԱ-ն 350 մլրդ դոլար, բյուջեն 170 մլրդ դոլար, որից 1 զինվորականի հաշվով ռազմական ծախսը՝ 300 հազար դոլար: Փոքրիկ Սլովենիայում այս ծախսը 90 հազար դոլար է, երբեմնի սոցիալիստական Չեխիայում 140 հազար...

Ուրեմն ի՞նչն է խանգարում-խոչընդոտում մեզ, ասենք՝ 5 տարի անց ունենալ այս թվերին մոտ ցուցանիշ, որը կրկնակի-եռակի գերազանցում է մեր ոխերիմ թշնամիների այսօրվա ծախսածը: Ի վերջո. թե ինչքանով է ՀՀ կառավարության կանեփային քաղաքականությունը տեղավորվում նախանշված գործընթացում, ցույց կտա ժամանակը, որը շռայլելու պատեհությունը մենք պարզապես չունենք:

9.02.2021

# Մեզ ձեռնտու չէ՞ հայ եւ հրեա ժողովուրդների բարեկամությունը




Երեկ երբ հայտնի դարձավ, որ անարգվել՝ կարմիր ներկ է լցվել Օղակաձեւ զբոսայգում տեղադրված հայ եւ հրեա ժողովուրդների կապը խորհրդանշող հուշարձանին, ինչպես նաեւ նույն վայրագությունն է նկատվել Հաղթանակ զբոսայգում Հայաստանի եւ Իսրայելի բարեկամության հուշաքարին, անմիջապես մտաբերեցի, որ Ադրբեջանի պետական լրատվական գործակալությունը՝ «Ազերթաջը», գերմաներեն լրահոսում տարիներ ի վեր ներկայացնում, շեշտադրում է, թե Հայաստանում հրեաների հանդեպ անհանդուրժողականությունն աճում է, չմոռանալով հակադրել՝ Ադրբեջանում նույնիսկ հերոսի կոչում է շնորհվել հրեա զինվորականին, որ մարտնչել է հանուն Ղարաբաղի «ազատագրման»: Պատվիրատուն հայտնի է ուրեմն, բայց ո՞վ է այն կատարողը, այն ձեռքը, որ չենք կարողանում (կամ՝ չենք ուզում) բռնել: Այսպես ենթադրելու առիթ է տալիս այն իրողությունը, որ հուշարձանի հանդեպ սա վանդալիզմի առաջին դրսեւորումը չէ: 2020 թվականի նոյեմբերի 6-ին «**Ազգ**»ում ծավալուն հարցազրույց էինք հրապարակել Հայաստանի հրեական համայնքի ղեկավար **Ռիմա Վարժապետյան-Ֆելլերի** հետ, նախաբանում ցավ հայտնելով, որ հոկտեմբերի 22-ին Երեւանի սրտում՝ Մոսկովյան- Տերյան փողոցների խաչմերուկին մերձակա այգում երկու ժողովուրդների ողբերգությունը՝ Շոան ու Ցեղասպանությունը հիշատակող, այդ ժողովուրդների դարավոր բարեկամությունը խորհրդանշող հուշարձանն անարգելու փաստը տկար, տգետ վարքի ցուցիչ է: Անհայտ չարագործներ հրդեհել, կարմիր ներկ էին լցրել հուշարձանի մոխրագույն քարե մարմնին, որի վրա փորագրված է՝«Ապրել, չմոռանալ»: Ո՞ւմ է ուղղված այս արժեքավոր հիշեցումը: Ուրացողների՞ն, մոռացկոտների՞ն, պատմության դասը չսերտածների՞ն: «Հուշարձանի մոտ ոչ տեսախցիկ կա, ոչ էլ որեւէ ձեւով հսկվում է», հոկտեմբերին մեզ ծանուցեց Վարժապետյան-Ֆելլերը, իսկ մենք հրեական համայնքի ղեկավարի այդ պարզաբանումը որպես հարց ուղղեցինք Կենտրոն համայնքի ոստիկանությանը: Խե՜ղճ ոստիկաններ՝ նրանք պատերազմի ժամանակ առաջնագիծ էին մեկնել, իսկ հիմա՝ արդեն ամիսներ, «գտել» են պահպանության արժանի եզակի մի խորհրդանիշ՝ մի վարչապետի, որ չի հարգում իր քաղաքացիներին, հուշարձան սրբությունները չի ճանաչում, չգիտի իր երկրի պատմությունը, ոչ էլ շրջահայաց է այնքան, որ չսեղմի մեր սակավաթիվ բարեկամ ժողովուրդների ցուցակը:

Երեկ Երեւանի քաղաքապետարանը մի հերթապահ գրություն տարածեց, որը սակայն կարելի է արագ մոռանալ, ինչպես սովորաբար լինում է, երբ պետության ներկայացուցիչը վարժեցնում է իր քաղաքացիներին, թե իր գրավոր եւ բանավոր խոստումն անարժեք մի բան է: Ավելի ուշ ոստիկանությունը ծանուցեց, թե «օպերատիվ-հետախուզական միջոցառումներ են ձեռնարկում, իրականացրել են դեպքի վայրի զննություն»:

Այս պահին ամենակարեւորը մեր համերկրացիների՝ Հայաստանի հրեական կազմակերպությունների ղեկավարների գրությունն է, որով հայտնում են, թե «ծայրաստիճան անհանգստացած են փետրվարի 12-ին Երեւանում Հայոց ցեղասպանության եւ Հոլոքոստի զոհերի հուշարձանի, ինչպես նաեւ Հաղթանակ զբոսայգում Հայաստանի եւ Իսրայելի միջեւ բարեկամության ծառուղում գտնվող հուշաքարի նկատմամբ տեղի ունեցած վանդալիզմի գործողություններից: Դրանք ոչ միայն զոհերի հիշատակի պղծում են, այլեւ՝ ուղղակի սպառնալիք հրեական ծագմամբ ՀՀ քաղաքացիների անվտանգությանը եւ էթնիկ հողի վրա ատելություն սադրելուն ուղղված փորձ: Ցավոք, վանդալիզմի նախորդ դեպքերը պատշաճ արձագանք չեն ստացել ՀՀ պաշտոնյաների եւ իրավապահ մարմինների կողմից: Հորդորում ենք անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռնարկել՝ հետագայում նման գործողությունները կանխելու համար»:

Վարչապետն ունի՞ ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդական, կա՞ ՀՀ-ում մի բարձրաստիճան պաշտոնյա, որի համար թանկ է հրեա ժողովրդի հետ մեր իսկապես արժեքավոր բարեկամությունը:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

# Հերթագրված երեխաները մեծանում են, իսկ մանկապարտեզները շարունակում են փակ մնալ



- Ուզում ենք աշխատել, բայց չենք կարող, որովհետեւ երեխային ոչ ոքի չենք կարող վստահել:

Փետրվարի 8-ին Երեւանի քաղաքապետարանի մոտ ծնողները պահանջում էին բացել մանկապարտեզները եւ բողոքի ակցիա էին կազմակերպել: Քաղաքային իշխանությունը պնդում է, որ հարցը մոտ ժամանակներս կլուծվի: Սակայն ծնողները պահանջում էին հստակություն, թե երբ են մանկապարտեզները վերսկսելու իրենց աշխատանքը:

«Ծնողների մեծ մասը չեն կարողացել գալ, քանի որ չգիտեն՝ ում մոտ թողնեն երեխաներին», մեզ հետ զրույցում ասաց **Մարինե Հայրապետյանը**:

Զրուցակիցս նշեց, որ իր երեխային մանկապարտեզ ընդունելու համար գրանցել է դեռեւս 2019 թվականի հունիսին, բայց հարցը հետաձգվել է համավարակի եւ սահմանափակումների պատճառով:

Ծնողները նշում են, որ այս ընթացքում շատացել են մասնավոր մանկապարտեզները:

«Ծնողների մի մասը ստիպված է երեխաներին մասնավոր մանկապարտեզներ տանում: Բայց ոչ բոլորը կարող են այդպես վարվել: Իմ ընտանիքում աշխատում է միայն ամուսինս, իսկ ես չեմ կարողանում աշխատել, քանի որ պետք է մնամ տանը՝ երեխայիս հետ», ասում է **Ելենա Մանուկյանը**, որը եկել էր իր 4-ամյա երեխայի հետ: Կինն ասում է, որ չի հասկանում պետական մանկապարտեզները փակ պահելու իմաստը, երբ մասնավորները աշխատում են:

Հավաքված ծնողներից մեկն էլ նշեց, որ չնայած նախընտրում է պետական մանկապարտեզը, սակայն ստիպված է երեխային վճարովի մանկապարտեզ ուղարկել: Մեկ այլ ծնող էլ նշում էր, որ ստիպված դուրս է եկել աշխատանքից, որ կարողանա երեխային խնամել:

Ծնողների պահանջը մեկն էր՝ վերսկսվեն մանկապարտեզների բնականոն ընդունելությունները, քանի որ իրենց նման շատ մայրիկներ չգիտեն՝ գնալ աշխատանքի, թե՞ մնալ երեխայի հետ, իսկ մասնավոր մանկապարտեզները թանկ «հաճույք են»:

Ծնողներից մեկը՝ **Զարուհի Սարիբեկյանը** նշեց. «Մեր տան շրջակայքի երեք մանկապարտեզներից ոչ մեկում տեղ չկա. արդեն կես տարի է, ինչ սպասում եմ, բայց կան ծնողներ, որ նույնիսկ իրենց բալիկներին երկու տարի առաջ են գրանցել, ու ոչ մի առաջընթաց չկա: Վերջերս գնացել եմ նաեւ քաղաքապետարան, մանկապարտեզների բաժնի պատասխանատուն ինձ պատասխանել է, որ մինչեւ սեպտեմբեր, պայմանավորված համավարակով, մանկապարտեզներում ընդունելություն չի լինելու. հիմա առաջնահերթությունները հիմնականում տրվում են միայնակ ծնողներին ու անապահով ընտանիքներին, նաեւ զինծառայողների ընտանիքներին: Բայց մեր ծնողների մեջ կան զինծառայողների ընտանիքների ներկայացուցիչներ, որոնց եւս առաջնահերթություն չի տրվել»:

Երեւանի մանկապարտեզներում այս պահին ավելի քան 12 հազար հերթագրված երեխա կա, իսկ այժմ հաճախում է 15 հազար երեխա: Քաղաքապետարանի մամուլի խոսնակ **Հակոբ Կարապետյանի** խոսքով՝ հիմա քննարկումներ են ընթանում հարցին լուծում տալու համար. «Հիմա շատ ակտիվ քննարկում է, եւ մենք լուծմանը շատ մոտ ենք: Կարծում եմ առաջիկա օրերին ինչ-որ լուծում կլինի, եւ մենք դրա մասին կհայտարարենք»:

Պետք է նշել, որ դպրոցները եւ համալսարանները հակահամաճարակային սահմանված կարգերին համապատասխան վերսկսել են դասերը՝ առկա եղանակով:

Օրերն անցնում են, երեխաները մեծանում, իսկ նրանց անունները դեռ հերթագրված են մանկապարտեզների ընդունելության ցուցակներում:

**ՀԱՍՄԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ**
**ՀՊՄՀ կուլտուրայի ֆակուլտետ**
**Լրագրության բաժին 3-րդ կուրս**

# Կիրիլ Գեւորգյանը՝ Հաագայի միջազգային դատարանի փոխնախագահ



**Ռուսաստանցի հայտնի իրավաբան-միջազգայնագետ, Հաագայի միջազգային դատարանի դատավոր Կիրիլ Գեւորգյանն ընտրվել է Հաագայի դատարանի փոխնախագահ: Ինչպես հայտնում է Ռուսաստանի ԱԳՆ-ն, ընտրությունները կայացել են փետրվարի 8-ին: Մինչեւ դատարանի կազմում ընտրվելը՝ մինչեւ 2014թ.-ը Գեւորգյանը Ռուսաստանի դիվանագիտական ծառայության համակարգում զբաղեցրել է պատասխանատու պաշտոններ, այդ թվում ՝ 2003-2009 թվականներին Նիդեռլանդներում Ռուսաստանի Դաշնության արտակարգ եւ լիազոր դեսպանի պաշտոնը: Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչության հաղորդագրության մեջ ասվում է, որ Գեւորգյանի՝ ՄԱԿ-ի գլխավոր դատական մարմնում նման պատվավոր պաշտոնում ընտրվելը նրա եւ ընդհանուր առմամբ ռուսական միջազգային-իրավական դպրոցի բարձր հեղինակության մասին է խոսում: ԱԳՆ-ում համոզված են, որ Գեւորգյանը կարեւոր ներդրում կունենա վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքի իրականացմանն ուղղված միջազգային դատարանի արդյունավետ աշխատանքի ապահովման գործում: Կիրիլ Գեւորգյանը ռուս հայտնի դերասանուհի Մարինա Նեելովայի ամուսինն է:**

Աղբյուր՝ Սպուտնիկ Արմենիա

# Լիբանանյան բարձրագույն շքանշան՝ Նուբար Աֆեյանին



«Պայքար» շաբաթաթերթից տեղեկանում ենք, որ Լիբանանի Հանրապետության նախագահ՝ գեներալ Միշել Աունի հրամանագրով ամերիկահայ հանրահայտ գիտնական եւ ձեռներեց Նուբար Աֆեյանը պարգեւատրվել է լիբանանյան բարձրագույն՝ «Ազգային արժանյաց կարգի» շքանշանով, որը նրան հանձնվել է փետրվարի 2-ին, ԱՄՆ-ում Լիբանանի դեսպան Գաբրիել Իսսայի կողմից: Շքանշանը շնորհվել է Covid-19-ի վարակի դեմ Նուբար Աֆեյանի գլխավորած Moderna ընկերության արտադրած պատվաստանյութի բռնած հաջող քննության կապակցությամբ: Այո, հակառակ Հայաստանում որոշ լրատվամիջոցների տարածած տեղեկությունների, Moderna-ի պատվաստանյութը ամերիկյան գլխավոր համաճարակաբանների կողմից արժանացել է բարձր գնահատանքի:

Հիշեցնենք, որ Ն. Աֆեյանը ծնունդով լիբանանահայ է: Ուսումնառության համար նախ գնացել է Կանադա, սովորել Մոնրեալի Մըկգիլ համալսարանում, որի ընթացքն ավարտելուց հետո անցել է Բոստոն եւ հռչակավոր MIT համալսարանում պաշտպանել դոկտորականը բիոքիմիկոսի մասնագիտությամբ, 1987 թ.ին: Այնուհետեւ, շնորհիվ իր ձեռներեցության ու նոր գաղափարների շտեմարան լինելու իրողության, հիմնադրել է շուրջ 30 մասնագիտացված ընկերություններ՝ մոտավորապես 10 մլրդ դոլար ընդհանուր դրամագլխով:

Լիբանանի նախագահի այս ժեստը, որը հատուկ է լիբանանյան ավանդության, այն է՝ գնահատել ու քաջալերել այդ հողի վրա ծնված յուրաքանչյուրին՝ որտեղ որ էլ նա բնակվելիս ու գործելիս լինի, փոքրիկ, շատ փոքրիկ այդ երկիրը դարձնում է եզակի ողջ աշխարհում:

Ո՜ւր էր թե Հայաստան մեր երկիրն էլ այդպիսին լիներ:

Ընդգծենք նաեւ, որ Ն. Աֆեյանը հոգով ու սրտով հայրենասեր է, նվիրյալ իր հայրենիքին ու ժողովրդին:

# Ցավի արմատացած երանգներ



Ցավի գույնը արմատացած մուգ երանգներ ունի, ու հանդերձանքի ինչ գույն էլ ընտրենք՝ մեկ է, մեր ներսում մութ է ավելի: Եռաբլուրում պետությանը գրկած մատաղ հոգիները ,արժանապատիվ մնալու ծանրությունը թողել են մեզ, փոխարենը իրենք տան սենյակում տեղավորվել են զինվորական համազգեստով լուսանկարի մեջ:

***Մարինան*** **անշարժ, ձեռքերը ոտքերին դրած, նստած էր բազմոցին, տան անկյունում փայտի վառարանն էր, շուրջբոլորը՝ մեկ սենյակում հավաքված էին Մարինայի ծնողները, քույրը, տատիկը: Երեխաներից ավագը՝ 2 տարեկան Արտյոմը, քնած է, իսկ 4 ամսական Ալեքսը հեծեծում է անցուղարձին: Ամուսինը՝** ***Սասուն Ավագյանի*** **հետ կինը վերջին անգամ սեպտեմբերի 26-ին էր տեսնվել. նա պայմանագրային զինծառայող էր: Պատերազմի սկսվելուն պես Մարինան երկու երեխաների եւ սկեսրայրի հետ Հադրութի շրջանի Ուխտաձոր գյուղից տեղափոխվել է Հայաստան:**

«Երեխաները փոքր են, հոր կորուստը դեռ չեն հասկանում, միայն ժամանակ առ ժամանակ Արտյոմը հորն է հիշում եւ սենյակով մեկ քայլում՝ պապա, պապա ասելով»,- ասում է նա:

Հոկտեմբերի 14-ից հետո Սասունի հետ այլեւս որեւէ կապ չի եղել: Զինակից ընկերներից մեկը պատմել է, որ նրան վիրավոր է տեսել, հետո ասել է, որ մահացել է:

«Ես իմ ամուսնական կյանքը նոր պետք է վայելեի, ի՞նչ հասկացա իմ կյանքից, նոր-նոր էինք ոտքի կանգնել, տունը պիտի վերանորոգեինք, անասուն առնեինք, էնքան պլաններ կային: Գոնե նրա մարմինը տեսնեմ, կարողանամ վերջին հրաժեշտ տալ, մինչ օրս նրան պատկանող որեւէ իր չի գտնվել»- արցունքն աչքերին պատմում է Մարինան:

Զրույցն ընդհատվում է ոտքերի թփթփոցի ձայնից. Արտյոմն է, բրդյա գուլպաներով սենյակի մի անկյունից մյուսն է վազում:

- Երեխա է, ուզում է դուրս գալ, խաղալ,- ասում է Մարինայի տատը՝ **Մարո Մինասյանը**:

Չնայած տնակի մեջտեղում դրված վառարանի մեջ նոր են փայտ գցել՝ տնակը չի տաքանում: Պատերի ներսում տիրող տրտմությունը, դանդաղ սողալով, տարածվում է ամբողջ մարմնով: Մարինան զգուշությամբ սեղանին է դնում ամուսնու նկարները, դասավորում է այնպես, որ ամեն ինչ տեսանելի լինի, Արտյոմն էլ է մոտենում սեղանին, փորձում է հպվել նկարների շրջանակներին, բայց ձեռքը նորից հետ է տանում՝ հավանաբար վախենալով վնասել:

«Ես հիմա ի՞նչ անեմ, ո՞նց գտնեմ մարմինը, բոլոր հիվանդանոցներում եղել եմ, դիահերձարաններում եղել եմ, չկա, ասում են՝ սպասեք, բայց ես իմ երեխուն ի՞նչ պատասխան տամ, էլ ո՞նց ասեմ՝ սպասիր, չկա.....»,- հարցնում է **Գեղամ Մինասյանը**՝ Մարինայի հայրը:

Սասունը Շուշիին տվել է ամենաթանկը՝ իր կյանքը, իսկ իր տան սենյակում տեղավորվել զինվորական համազգեստով լուսանկարի մեջ:

**ՀԱՍՄԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
**ՀՊՄՀ 3-րդ կուրս լրագրություն**

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան Լ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԹԵՔԵՅԱՆ ՓԱԲԼԻՇԻՆԳ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
**e-mail:** azg@azg.am, azgdaily@gmail.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշուապահութիւն (գովազդ) հեռ. 582960
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյանե սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Եզնիկ Կողբացի 20/3: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 12.2.2021, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: